

«DROSCHEK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԿԷ

№ 2
FEVRIER
1932
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԹԵԱՆ ԴԱՆՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ԳՐԳԸՆ

ԹԻՒՐԲ ՄԱՄՈՒԼԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Թիւրք մամուլը չի կարողանում հանդատաւորաբար անդրադարձնել հայերի դէմ զարգանում է յարաճուն: Վերջին մի քանի ամիս սանձարձակութիւններն այլ եւս անցել են ամէն չափ ու սպիման:

Յօշուած եւ արիւնրայ հայոց ուրականը շարունակում է խռովել թիւրք շարդարարների յանցաւոր խիղճը: Մասնաւոր ու պաշտօնական թերթեր, Անգորա թէ Գոլիս, անվերջ սպառնալիքներ, անհաշիւ յերկրանք ու զրպարտութիւններ են թափում հայերի գլխին: Ամէն կողմ հայկական վտանգ է երեւում թիւրքի տեսողութեան: Վանդալական վայրագութիւններից յուսահատ քիւրդն է դէնքի դիմում — հայի մատ կայ մէջը: Սիւրիական սահմանի վրա մաքսանենդութիւն է պատահում — հայն է մեղաւոր: Ըմէթ փաշան ճամբորդութեան է դուրս գալիս — անպատճառ հայ հասարակչի առասպելը մէջտեղ պիտի գայ: Արտասահմանի դրամատէրներ փող չեն տալիս թիւրքերին — հայերի դրողւմով է որ չեն տալիս: Հայերը ամէն տեղ ու բոլոր գործերի մէջ կուռ ճակատով թիւրքի դէմ — այսպէս է պատկերանում հայը թիւրքի աչքին:

Բայց իրականում այդպէ՞ս է արդեօք: Ինչո՞ք գոյութիւն ունի հայկական միացեալ ճակատ թիւրքի հանդէպ: Ծի՛շտ է, որ հայը կամեցաւ է ու միաբան թիւրքական խնդրում, ինչպէս պնդում են թիւրք թերթերը:

Ինչ են ասում փաստերը: Ո՞վ է, իբրև միջնորդ կամ առեւտրական, արտասահմանի շուկաներում թիւրքական ապրանքների ծախսող ու սպառողը — հայ չարչին, որ մի քանի թշուառ ոսկիների համար չուկայ է դնում իզմիրի թուզի ու չոր պտուղների, Սեւ Մովսի կաղինի, Անատոլուի բուրբի ու մորթեղէնի, թիւրքական գործածքների ու սննդեղէնի համար եւ դրանով հարստացնում թիւրք պետական գանձարանը: Ո՞վ է սպառող թիւրքական մթերքների՝ գանազան պահածոների, անուշե-

ղէնի, պտուղի ու բանջարեղէնի, ամէն տեսակ թիւրքական ապրանքների — մեծ չափով նաեւ հայը: Ո՞վ է օգնում թիւրք վաճառականներին ու կառավարութեան օտար երկրներում վարկ ու փոխառութիւն ճարելու — նաեւ հայ միջնորդը: Թիւրքական հանրային ու պետական կեանքի որ ասպարէզը ուղում էք առէք, այս կամ այն ձևով հայը միշտ մասնակից է նրան, շարունակում է մնալ թիւրքի կողքին, հակառակ որ ամէն պատճառ եւ պարտականութիւն ունի դառնելու թիւրքի դէմ: Ա՞յս է որ թիւրք մամուլը կոչում է «հակաթիւրք մէկ միացեալ ճակատ»:

Ու դարձեալ միեջև այժմ թիւրքի այսու չգանեց մէկ հատիկ թիւրք, որ, չենք ասում բարեկամական, դէ՞թ հաշտ յեզուով խօսէր հայերի հետ կամ հայերի մասին: Մէկ հատիկ թիւրք, որ ընդունէր թէ՛ հայերի վերաբերմամբ գործում է անարդարութիւն, որ պէտք է դարձանէլ: Մէկ հատիկ թիւրք, որ համաձայնէր գոնէ փոքրիկ զիջումով հայերին՝ ընդունէլ, որ հայն էլ «Աստծոյ ստեղծած արարածն» է եւ իրաւունք ունի ապրելու իր կողքին: Այդպիսի թիւրք չտեսանք ցարդ, բայց ինչքա՞ն հայեր, ու նոյն իսկ ազգային համբու վայելող գործիչներ, պատրաստ են ամէն բան մոռանալով ձեռք մեկնել թիւրքերին, առանց հարկադրանքի, անվերապահ եւ առանց որեւէ ընդառայումի հակառակ կողմից:

Ո՛չ, ի զուր են անհանգստանում թիւրք հրապարակագիրները, հայկական միացեալ ճակատ գոյութիւն չունի, դժբախտաբար — ո՛չ գործի ճակատ, ո՛չ զազափարական: Հայ միտքն ու կամքը շարունակում են խարխալիկ պտակուած՝ թիւրքական միաձոյլ օւ կուռ ճակատի առջև:

Մենք հասկանում ենք թիւրք զեկավարների անհանգստութիւնն ու վախը: Միանգամայն տեղին է նրանց ներքին միտքը, թէ այն ամենից յետոյ, որ պատահեց հայերի եւ թիւրքերի

միջևե, հայերը չեն կարող հանգստանալ, ու պէ՛տք է միանան ո՛չ միայն արդար վրէժի, այլ և Իրենց մարդկային և ազգային բնական իրաւունքները պաշտպանութեան համար: Ծակատի միութիւնը թելադրում է հէնց իրերի առարկայական պայմաններով: Անբան անասուններն անգամ միանում են ինքնապաշտպանութեան բնազդով ընդհանուր թշնամու դէմ, ուր մնաց մարդը: Թիւրքը չի կարող ըմբռնել ու չի հաւատայ, թէ հայը միացած է իր դէմ. այնպէ՛ս բնական է միութեան անհրաժեշտութիւնը:

Կարելի՞ է տարածողել թիւրքին: Երբ առարկայական պայմանները շարունակում են մնալ, ճառերն ու յօդւածները բաւակա՞ն են, որ թիւրքը ընդունի, թէ հայերն իսպառ մոռացել են արիւննոտ երէկը և պատրաստ են ապրելու հաշտ ու խաղաղ: Եւ, առհասարակ, հայերի կողմից կատարւած որեւէ ընդառաջում, այսօրուց պայմաններում, ընդունա՞կ է փոխելու թիւրքերի հակահայ մտայնութիւնը և քաղաքական հետեւանքներ տալու:

Ի հարկէ, ո՛չ: Մենք էլ, թիւրքն էլ, ամբողջ աշխարհ էլ շատ լաւ գիտէ, որ մինչև ուր հայ ժողովրդի վերաբերմամբ դործւած անարդարութիւնը չղարմանի ու հայ-թիւրքական արեւոտ վէճը բաւարար լուծում չտասնայ, ո՛չ մի հաշտութիւն չի կարող լինել հայերի և թիւրքերի միջև: Ի՞նչ խօսք հայտութեան մասին, երբ անդին ամբողջ թիւրքահայաստանը մնացել է աւերակ ու ամալի, իսկ ասդին մէկ միլիոնից աւելի թիւրքահայեր, վտարւած սինց ու հողից, անհաբեր սպասում են հայրենիք վերադառնալու օրւան:

Բռնութիւնը աշխարհիս երեսին ամէն բան

չէ: Բռնութիւնը կարող է իշխել որոշ ժամանակ, բայց վերջնական յաղթանակը արդարութեանն ու իրաւունքինն է: Մենք հաւատում ենք, գիտե՛նք, որ հայի համար էլ արդարութեան ժամը պիտի հնչէ: Եւ այդ կը լինի այն ժամանակ, երբ թիւրքն էլ հասկանայ կամ հարկադրւած լինի ընդունել, որ հային էլ տեղ պիտի տրի արեւի տակ, երբ նա վերջ տայ սպանակիքի, բռնութեան ու ջարդի քաղաքականութեան և ճանաչէ նաեւ հայի ազատ և անկախ գոյութեան իրաւունքը:

Ե՞րբ կը հնչէ այդ ժամը, ի՞նչպէս, թիւրքը՞ համաձայնութեան թէ հակառակ նրա կամքի — պատմութեան կարգադրելիք դործն է: Մեր պարտքն է գիտակցել այդ և ըստ այնմ որոշել մեր անելիքը: Խրատներով, յորդորներով, մտացածին ծրագիրներով ու աղբւսագիր դիմումներով թիւրքին, այսօր ո՛չ անդունդը կը լեցի թիւրքի ու հայի միջև, ոչ էլ կը հեշտանայ հայ քաղաքական դատի լուծումը: Ընդհակառակը, աւելի կը դժւարանայ:

Թիւրք մամուլի կեցւածքը բնական է: Ո՛չ զարմանալ, ոչ զայրանալ, հասկանալ ու դործնել է պէտք: Ներկայ հանգամանքներում, պարզ ժամավաճառութիւն է և եռանդի ապարդիւն վատնում «ընդհանուր լեզու» գտնելու ճիգերը: Աղբերակով, խղճին ու բանականութեան կոշտ անելով կարելի չէ տարհամոզել միայն ուժի ու բռնութեան լեզուն հակացող թիւրքին:

Թիւրքական մամուլի անհայտ արշաւանքից մեզ համար հետեւում է միայն մի եղրականութիւն — ընդհանուր թշնամու դէմ ունենալ համազգային ընդհանուր ճակատ: Գաղափարի և դործի ճակատ:

ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՏԱՆԱՄԵԱԿ

Տարբ տարի ստալ, 1922թ. յունւար 30ին, բացեց Խորհրդ. Հայաստանի բանւորների, գիւղացիների և կարմիր բանակայինների խորհուրդների անդրանիկ համագումարը: Այդ համագումարի արձանագրութիւնը՝ հրատարակւած առաձիկ գործի մեզ հնարաւորութիւն է տալիս վերլուծելու այն դրութիւնը, որ տիրում էր Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատման սկզբնական շրջանում: Իացի այդ, շատ հետաքրքրական է բաղդատել Հայաստանի ներկայ վիճակը այն ժամանակակիցութեան հետ, որից կը պարզի, թէ այս մէկ տասնամակում ի՛նչ ուղիներով է ընթացել երկրի քաղաքական կեանքը, սնտեսութիւնն ու մշակոյթը:

Համագումարում ճննութեան առարկայ եղող զբլխաւոր հարցերն էին՝ կառավարութեան հաշւետւութիւնը (Մեծանիկեան), տնտեսական նոր քաղաքականութիւնը (Լուկաչին), Անդրկովկասի հանրապետութիւնների Դաշնակցութիւնը (Մաւեսան) և գիւղատնտեսութեան ու հողային քաղաքականութիւնը (Երզնկեան): Իր խորութեամբ ու պետական ըմբռնումով առանձնապէս աչքի է ընկնում Լուկաչիի գիկուցումը: Խորհուրդների առաջին համագումարը տեղի էր

ունենում առանձնապատուկ պայմաններում՝ «յաղթութեան» նշանակի տակ — Հայաստանի խորհրդայնացում, Փետրւարեան Ապստամբութեան ճնշում, Սիւխանի ու Չանկեղուրի դրամում և բարեկամական դաշինքի կնքում Տաճկաստանի հետ, բայց համագումարի տրամադրութիւնը բնաւ չէր համապատասխանում այդ յաղթանակներին: Ընդհակառակը, բոլոր գիկուցումներն իրենց վրա կրւած էին մտահոգութեան կնիք: Մտահոգութիւն, որ հարկադրեց իշխանութեան Փետրւարեան ժողովրդական ապստամբութիւնը և տիրող անկայուն վիճակը: Այնպէս որ, եթէ երբեմն պատահում էին սպեկուլյութեան պրոթիւսներ, դրանք աւելի շուտ կրում էին արհեստական և բռնագործիկ բնոյթ:

Ի հարկէ, ըստ գիկուցումների, բոլոր դժբախտութիւնների բուն արբւրը Հ. Յ. Դաշնակցութիւնն էր և հանրապետական շրջանի քաղաքականութիւնը: Որպէս զի այդ տեսակէտն արմատանայ ամենքի մէջ, նրանք զիմում էին ամէն միջոցի խեղաթիւրելու համար փաստերն ու իրողութիւնները:

Այսպէս, օրինակ, բալլեկի վարիչներն աշխատում էին համագումարին համոզել, թէ Հայաստանի աշխատաւորութիւնը ապստամբելով դաշնակցական կառա-

վարութեան դէմ, 1920թ. նոյեմբեր 29ին տէր դարձաւ Հայաստանի իշխանութեան: Նախ և առաջ Թաւանը ճիշտ չէ: Հայաստանը խորհրդայնացաւ ոչ թէ նոյ. 29ին, այլ դեկտ. 2ին, երբ Հանրապետական կառավարութեան ու Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչ Լեզրանի միջև կնքած Համաձայնագրով յայտարարեց խորհրդային իշխանութիւն: Եթէ Հայաստանի խորհրդայնացումը տեղի ունեցած լինէր նոյ. 29ին, Լեզրանը դեկտ. 2ին համաձայնութիւն չէր ստորագրի տապալւած կառավարութեան հետ և չէր համաձայնի կողմիցին կառավարութիւն կազմել բուլճարիկներին ու դաշնակցակններին: Միւս կողմից, եթէ ապստամբ աշխատաւորութիւնն ինքն է տիրացել իշխանութեան, ապա ինչո՞վ բացատրել Մեանիկեանի յայտարարութիւնը համազումարին, թէ՛ «Աստու ճն, թէ՛ Հայաստանի խորհրդ. կառավարութիւնը ի՞նչ կառավարութիւն է, որի գլխին Ռուսաստանի կամրոյր բանակն է կանգնած. բայց ո՞վ կտրանայ, որ մեզ ենք նրան կանչել, որովհետև մենք մեր սեփական ուժերով իսկոյն ազատագրելն չէինք կարող: Իսկ ազատել պէտք էր»: Ուրեմն, «զգառուութիւնը» քննել է ուսակական սեկներով և ոչ «աշխատաւորութեան ապստամբութեամբ»:

Երկրորդ, համազումարում աշխատեցին նսեմացնել Փետրարեան կառավարութեան արժէքը՝ համարելով այն դաշնակնների, կղերի ու կուակնների գործ: Իսկ թէ իրենք, բուլճարիկներն ի՞նչ լազնացեց են ունեցել այդ ժողովրդական ընդգրկումի դրդապատճառներէ մէջ, ի հարկէ, ո՞րքա խօսք չստաց: Փետրարեան ապստամբութեան բնոյթն արդէն ճշտուած է: Հարկ չկայ կրկնութիւններ անելու: Հետաքրքրողները կարող են դիմել բուլճարի Բորեանին, որի սպանիչ դատաւճիտը բուլճարիկներէ մասին յայտնի է «Իրօշակ»ի ընթերցողներին*):

Երրորդ, խօսելով 1921թ. հուլ. 13, Կարսի Հայաստանական դաշնագրի մասին՝ Մուսեանը ճշմունք է ապացուցանել, որ այդ դաշնագիրը հետեանք էր Հայաստանի և Տաճկաստանի փոխազումը բարեկամութեան ու նրա ստորագրութեան կամուտը մասնակցել են Վրաստանն ու Արբիկանը: Համազումարեց ծածկեցին, որ Կարսի դաշնագրի կէտերը արդէն վաղորօք մշակուած ու հաստատուած էին 1921թ. մարտ 16ին Մոսկայում Քեմալի և Խորհրդ. Ռուսաստանի ներկայացուցիչներէ միջև: Եւ զուր չէ, որ Բորեանը Կարսի դաշնագրը համարում է մարտ 16ի դաշնագրի կրկնութիւն և որակում է որպէս պատմութեան մէջ չտեսնուած ամենախայտառակ ու անարդար մի դաշնագրի: Իսկ ինչ վերաբերում է վրացիներէ ու արբիկաններէ մասնակցութեան, այդ էլ բխում էր նոյն մարտ 16ի դաշնագրի այն կէտից, համաձայն որի, անդրկովկասեան Հանրապետութիւնները պարտաւոր են ենթարկուել ուսուսանական դաշնագրում նախատեսուած բոլոր կէտերին:

Չորրորդ, նոյն Մուսեանը, խօսելով անդրկովկասեան Հանրապետութիւններէ դաշնակցութեան նախագծի մասին՝ յայտարարում է, թէ՛ այդ դաշնակցութիւնը կարճուած է Անդրկովկասի ժողովրդներին յօտար կամեղով, և թէ՛ սուս է տարածուած այն լուրը, թէ՛ իրր վրացիներն ընդդիմանում են: Այն ինչ, Անդրկովկասի Դաշնակցութեան զորախորը յղացել են ոչ թէ իրենք անդրկովկասեան ժողովուրդներն, այլ թէրազրուած է Ռուսաստանի Կոմկուսի Կենտկոմի կողմից, ինչպէս այդ յայտարարեց Ստալինը 12րդ կուսհամագումարում: Եւ յետոյ, վրացիները ոչ միայն ընդդիմացել են, այլ և տարիների ընթացքում ուսեղ ապագա մղեցին դաշնակցութեան դէմ: Այդ մասին արժէքաւոր վկայութիւն է տալիս Տրոցկին, որին համազումարը Լենինի և Կալինինի հետ միասին ընտրել էր պատուաւոր նախագահ: «Իմ կեանքը» գրքի երկրորդ գատորում,

Տրոցկին, մանրամասն պատմելով վրացի կոմունիստներէ և Կրեմլի միջև եղած պայքարը, Ստալինի քաղաքականութիւնը Անդրկովկասի հանդէպ անւսանուծ է գտնելի և անպարտական սեծապետութիւն» (էջ 224):

Երբ տեղի ունեցաւ խորհուրդների ստալին համազումարը, Հայաստանը դեռ համարում էր խորհրդային անկախ Հանրապետութիւն, որն իր երևան խորհրդային Հանրապետութիւնների հետ կապուած էր բարեկամական դաշինքներով: Մուսեանը հաւատարացուներ էր տալիս համազումարին, թէ անդրկ. Հանրապետութիւններէ միութեամբ Հայաստանի անկախութիւնը ոչնչով չի խաթարել: Ասկայն, այս տաս տարիներէ ընթացքում, ոչ միայն Անդրկ. Հանրապետութիւնների Դաշնակցութիւնը ձեւափոխեց որպէս Անդրկովկասեան Դաշնակցութիւն, այլ և վերջինս դառնալով Խորհրդ. Միութեան մէկ մասնիկը՝ Հայաստանը կորցրեց ինքնուրոյնութեան վերջին մնացորդները և, ի վերջոյ, փաստօրէն վերածնեց մէկ դաւառել: Ապացոյց, թէ՛ կուզ, Համ. Կոմկուսի Կենտկոմի 1931թ. հուլ. 31ի իրօք «պատմական» որոշումը:

Տեսեալեան քաղաքականութեան մէջ, տաս տարի առաջ, Հայաստանի վարչիչները պարզ «աջ օպորտունիստական-հաշտողական» թեզումներ էին երևան բերում: Հողօրդով Տրոցկեանը յայտարարում էր, թէ հողային չափով և հողաբաժանման միջոցներով զարկ են տալու գրեզցիական մասը տնտեսութիւններին: Նոյնը և ազատ աւելուելի մասին: Բացի այդ, նոյն Տրոցկեանը բացառապէս այն տեսակէտն էր արժանութում՝ թէ Հայաստանը գործարանային-արդիւնաբերական երկիր կարող է դառնալ միայն յիսուս տարի յետոյ: Նոյն Տրոցկեանը Հայկ Ազատեանին հաստատացնում էր, թէ երբ Հայաստանը գործարանային երկիր դառնայ, իրենք ուղորդներն արդէն փառձ կը լինեն: Մինչդեռ, ոչ յիսուս տարի է անցել, ոչ էլ Տրոցկեանի ու Ազատեանի ուղորդներն են փոռել, բայց Հայաստանը ... «արդէն սոցիալիստական երկիր» է շնորհիւ հրաշագործ Նուսեանի:

Խորհուրդներն անդրանիկ համազումարը կայացաւ տնտեսական դժուրակ պայմաններում: Սովը, հացի սոսմերն ու մթերքի պղծւելը այն ժամանակայ կացութեան ամենադճարախօս արտապայտութիւններն էին: Պատերազմից, քաղաքացիական ու ազգամիջեան կռիւներից յետոյ, այդ դրութիւնը համարում էր քնակակ և արդարանալի: Բայց արարարացման ի՞նչ խօսք կայ այսօր, տաս տարւայ զխաղաղ ու շինարարք կեանքից յետոյ, երբ նոյն դրութիւնն է տիրում Հայաստանում:

Տաս տարի առաջ Հայաստանում գործ էին դեռ հին ուղղագրութեամբ և որոշ ջանք թափում զարկ տալու ազգային մշակոյթին: Համայնարանը, գիտական ճեմարանը, հրատարակական ընկերութիւնը մեծ չափով գտնուում էին անկուսակցական ժառուրականութեան ձեռքին: Այսօր, բացի լինելիքի ու ստալինիզմի «ուսումնքից» Հայաստանում ուրիշ ուսմունք գոյութիւն չունի: Հայ մշակոյթի ներկայացուցիչները ամենադճարեան հայածանքն են ենթարկուել և ազգային գրականութիւնը օրէնքից դուրս է յայտարարուած: «Ձեռով ազգային, բովանգակութեամբ արդիւնարական»—ասա Հայ մշակոյթի պատկերը Հայաստանում: Այսինքն, հայերն չենուով ուսուցանում են ամէն ինչ, բացի ազգային կնիքը կրող գիտելիքներից ու աւարկաններից:

Տաս տարի առաջ, Հայաստանում գոյութիւն ունէր համեմատական ազատութիւն: Խորհուրդներէ առաջին համազումարում անկուսակցական պատգամաւորները նոյն իսկ ջննարանում էին խորհրդային կառավարութեան գործուղութիւնը: Գրիգոր Չուբարի համարձակութիւն ունէր անցած պաշտպանելու դաշնակցական կառավարութեան քաղաքականութիւնը: Հայաստանում գործում էր Ամերիկեան Օգնութեան Կոմիտէն, Երևանում հրատարակում էր անկուսակցական «Մշակ» թերթը, երկրում խզճի և կրօնի ազատու-

*) «Իրօշակ», 1931թ. յուն. —փետրւար:

թիւն էր յայտարարած, և ամէն կերպ աշխատում էին երկիր ներքաւել անդուստիական մատուցականութիւնը: Նոյն իսկ Համալսումնաբար երախտագիտութեան քանակն ուղղեց բարձրագույն Ամերիկայի ժողովրդին: Իսկ այսօր, անդամ կոմունիստները խօսքի ու մտքի ազատութիւն չունեն, խորհրդային մամուլը իրստ պարզնութեան է ենթարկւած և անասուածներին միութիւնը անիմայ Հայածանքի է ենթարկել կրօնը: Ամերիկեան Կոմիտէն արտաքուէ երկրից, նրա պաշտօններէն բանտարկեցին ու արտորեցին, իսկ անդուստիական մատուցականութիւնը քլւած է Սիբիր ու Սոյոմկի: Եւ Գրիգոր Չուրաբները սողում են բոլշեւիկների ոտքերի տակ ու անվերջ Հայհոյում տաս տարի առաջ իրենց պաշտպանած Դաշնակցութեան:

Գլխաւոր գէնը, որով անընդհատ խարաղանում էին Համալսումնաբար Դաշնակցութեանը, խորհրդային իշխանութեան կողմից երկրում Հաստատուած խաղաղութիւնն էր: Այդ փաստի առաջ գլուխ էին խոնարհում շատ շատերը, անգամ խորհրդ. իրաւակարգի Հակառակորդները: Սակայն, այն գնով, որով բոլշեւիկները Հաստատեցին այդ խաղաղութիւնը, ուրիշ ամէն իշխանութիւն էլ կարող էր Հաստատել: Ի Հարկէ, արտաքուէն պատերազմներ չեն լինի, եթէ ստորագրէր Կարտի խայտառակ դաշնագրի նման մի դաշնագիր, եթէ Ախալքալար թողնէր Վրաստանին, Նախիջևանն ու Ղարաբաղը Ազրբեյջանին: Ի Հարկէ, սպառնիլեան կրիւներ տեղի չէին ունենայ, երբ Հայաստան էին ընդունուած արտօնակ պալմաններով ութսուն Հազար թուրքեր և զոները փակուած էին Հայ գաղթականներին առջև:

Սուտ է, որ Հայաստանում խաղաղութիւն է տիրում: Այո՛, արտաքուէն պատերազմ չի եղել այս տաս տարիների ընթացքում, բայց յարտաւորէն տեղի է ունեցել ներքին կռիւ: Կոխ ժողովրդի և իշխանութեան միջև:

Արտաքին պատերազմ չի ծագել, որովհետև Հայաստանի Հարեաններն այլ ևս առնելու չունեն մեր երկրից և Հայ բոլշեւիկներն էլ նրանց չլու կամակատարներն են, որ յանուն իշխանութեան, վաճառք են Հա-

նել Հայաստանի Հողամասերն ու իրաւունքները: Բայց ժողովուրդը պայքարի գէնը վար չի գրել: Որ Հայաստանը խաղաղութիւն չէ ունեցած, ապացոյց և այն Հազարաւոր մարանչողները, որոնք շարունակում են ազատութեան դրօշ բարձր պահել բանտերում ու արտաքուէ խորհրդում: Խաղաղութիւն չէ, երբ երկու տարի շարունակ Հայաստանի Համարեա բոլոր շրջաններում գիւղացիական ապստամբութիւններ են ծագում, երբ Հայաստանի լեռները լին են փախտականներով ու Հազարներով քլւում են Սիբիր: Խաղաղութեան նշան չեն և Ախալքալարի ու Ղարաբաղի բնորոտացումները Հայաստանին միանալու պահանջով...:

Այս մէկ տասնամեակի ընթացքում Հայաստանում տեղի ունեցած փոփոխութիւնների մասին կարելի էր անվերջ գրել: Բաւական է միայն արձանագրել, որ խորհուրդների առաջին Համալսումնաբարի ժամանակայն Նէպի Հայաստանն այսօր Հեծնում է ռազմական կոմունիզմի դժեռակ ճիւղաններում:

Համեմատութեան լաւագոյն չափանիշը Հայկոմկուսի ներկայ կազմն է: Տաս տարի առաջ կուսակցական կուռքերն էին՝ Լուկաչին, Մակիցեան, Աշոտ Յովհաննիսեան, Հայկ Աղաւտեան, Աւիս, Եաղունց, Կասեան և այլն: Դրանցից ոմանք երկրից արտաքուէն որպէս այլ թեքումներ ունեցողներ (Լուկաչին), ոմանք չեզոքացեցին անկախ մեղքերի Համար (Մակիցեան, Աւիս, Կասեան), ոմանք՝ որպէս տրոցիկականներ (Եաղունց, Աղաւտեան) և ոմանք էլ որպէս սպառնալիցաներ (Աշոտ Յովհաննիսեանի Կենտկոմը): Հետաքրքրական է, որ այս տաս տարիների ընթացքում, շատ կոմունիստներ արտաքուէն կուսակցութիւնից առ մեղադրանքով, թէ նրանք Հայաստանի անկախութեան են ձգտում, Հողային պահանջներ են յարուցանում և ինքնուրոյն ստուեստաբարութեան խնդիր են դնում:

Իսկ Հայաստանի ներկայ վարիները, որոնք շնորհիւ իրենց անկախունքն ու չու կամակատարութեան կորոզացան դրաւել Լուկաչինի ու Աշոտ Յովհաննիսեանի աթոռները, երկիրը ստանում են ղէպի քայքայում ու ստրկացում:

ՇՆՈՏ-ԱՐԾՐՈՒՆԻ

ՕՏԱՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ԹԻԻՐՔԻԱՅՈՒՄ ^{*)}

Օմանեան կայսրութեան պետական կենտրոնն ու ժողովրդական անտեսութիւնը ամողջապէս դառնում էր եւրոպական դրամաբլիթի աղբյուրութեան տակ: Պատերազմից առաջ օտար դրամաբլիտը Հետեւեալ ներգրումներն ունէր թիրքիստում.

Պետական փոխառութիւնների մէջ	սպի ֆրանկ	2.889.499.000
Երկաթուղիների մէջ		1.131.009.000
Նաւահանգիստների մէջ		79.942.000
Արդիւնաբերութեան, դրամաների, անլարժ կալաններին, առևտրական և ապահովագրական ձեւաւորների մէջ		1.485.000.000
Գումար		5.585.450.000

Այս 5.585.450.000 ֆրանկը կամ մօտ 224 միլիոն անգլիական ոսկին, բաժանուած էր, զլխաւորապէս, Ֆրանսայի (կէսից աւելին), Գերմանիայի (դրոթէ մէկ և

բաւորը), Անգլիայի (մօտ 15%) և Իտալիայի միջև: Պատերազմից յետոյ, այս դումարները ժառանգաբար անցան թիրքիստի և Օմանեան կայսրութիւնից անջատուած նորաստեղծ պետութիւններին: Դրամագրուիտների գերմանական մասը իւրացեց դաշնակից պետութիւնների կողմից:

Ո՛ր մասը բաժին Հասաւ զեմալական թիրքիստին և ինչ պիճակ ունի այժմ օտար դրամալուխը թիրքական Հանրապետութեան մէջ:

Լոգանի դաշնադրով և Հետագայ Համաձայնութիւններով Օմանեան կայսրութեան պետական պարտքից թիրքիստի վրա դրեց 86 միլիոն ոսկի լիբր: Տասնեակ տարիներ շարունակ թիրք պետական բիւռը չէր պէտք է վճարել սուլթաններին կնքած փոխառու-

*) Յօդուածը կազմելիս օգտագործուած են Ս.Աղաւմուլի «Ասիական թիրքիստի բաժանումը» (Раздел Азиатской Турции) և «Նոր Արեւիկէ»ի Ա. Գ. Իմէլ յօդուածը («Иностраный капитал в Турции», «Новый Восток» № 26-27) Journal des Finances շարաթաթիւրը:

Թիւններէ հատուցման համար տարեկան 2 միլիոնից մինչև 3,400,000 ոսկի լիբա կարելի է ըմբռնել, թէ ի՞նչ ծանր բեռ է այս Թիւրքիայի վտիտ դաճաճարանի համար: Թիւրք պետական բնույթին, որ այսօր մեծ դժբախտութեամբ որդաճ է գոցել 180 միլիոն թուրք կամ մօտ 18 միլիոն ոսկի լիբայով, իր մէջ ութերորդ մասը պիտի վճարէ չին պարտքերի դիմաց:

Փոխառութիւնները փոքր մասն են այն դրամագիրի, որ օտարներէ կողմից դրամ է Թիւրքիայի մէջ: Այսօր էլ Թիւրքական երկաթուղիները, նաւահանգիստները, դրամատներն ու արդիւնաբերութիւնը սպարում են գլխաւորապէս օտար միջոցներով: Արգալին դրամագլուխը շարունակուող է մնալ շատ խեղճ տողովդրական անտեսութեան հաշուհաշուով:

Առեւնք երկարաւիթ: Բացի Հէնզագի գծից, որ ամբողջապէս կառուցած է Թիւրքական միջոցներով, Օսմանեան կայսրութեան բոլոր չին երկաթուղիները գլուխ են բերած օտար դրամալիւով, օտար յանձնառուների ձեռքով: Երկաթուղիները այն մասը, որ, Օսմանեան կայսրութեան ջաջայման հետեանքով, մնաց Թիւրքիայի ձեռքը, փաստօրէն այսօր էլ շարունակուող է սնել օտար դրամագլուխով, հակառակ Թիւրքացման քաղաքականութեան:

Պատերազմից յետոյ, օտար դրամագլուխը նոր ներդրումներ դրեթէ էլ արել Թիւրքիայի երկաթուղային գործի մէջ, բացի Իլիճա-Փարամուտի ներդրումից, փոքրիկ երկաթուղուց, որ Փրանսացիներն անցկացրին Բալիա Կապադոկիայի արձճէ հանգրի շահագործման համար, մօտաւորապէս 1,700 հազար թուրք լիբա ծախսով:

Հին երկաթուղիներից օտար դրամագլուխի ձեռքը գտնուող են հետեւեալ գծերը, իրենց արժէքով.

	ոսկի լիբա
Զմիւռնիա-Ալսիմ	4,587,747
Զմիւռնիա-Գասապա	6,170,000
Մուսափա-Բրուսա	156,000
Արեւելեան	2,000,000
Գումար՝	12,913,747

Թէ ինչ վիճակի մէջ է այս երկաթուղիների անտեսութիւնը, կարելի է գաղափար կարծել այն փաստից, որ, օրինակ, վերջին տարիները Զմիւռնիա-Ալսիմ գծի վրա հիմնական նորագութիւններ կան կատարուել, նոր նիւթեր ու շարժարկներ գոյրքը, վազողներն ու վայրաշարժներ չեն գնել: Երկաթուղին ապակուել է իր իւրի մէջ: Շահաբերութիւնը եղել է, միջին հաշուով, տարեկան 6%:

Մօտաւորապէս նոյն պատկերն են ներկայացնում և միւս գծերը:

Օտար դրամագլուխի ենթակայ երկաթուղիների հաշին փաստօրէն պէտք է, զնել և Անատոլու-Բաղդադ ու Մերսին-Արանա գծերը, որոնց պատմութիւնը շարժական շնորհաբերական մի էլ է եւրոպական աշխարհակարութեան ընդունման տեսակէտից: Այդ երկու գծերն էլ, ինչպէս և Հայդար Փաշա նաւահանգիստը, պատերազմից առաջ, գտնուող էին գերմանական դրամագլուխի ձեռքը Դէնյէ Բանկի գլխաւորութեամբ: Զինադադարի շրջանում քաճեթթիթերը անցան Փրանսացիների, անգլիացիների և զիցիւրացիների ձեռքը, իսկ Լոզանից յետոյ - Թիւրք կառավարութեան և քաճեթթիթերի միջև կնքած համաձայնութեամբ, 1928թ. դեկտեմբերին, Անատոլիի երկաթուղին, Մերսին-Արանա գիծը և Հայդար Փաշա նաւահանգիստը զնեց Թիւրք կառավարութիւնը 528 միլիոն զիցիւրական ֆրանկով կամ մօտ 28 և քաղաղք միլիոն ոսկի լիբայով: Առաջին չորս և կէս տարին Թիւրք կառավարութիւնը պիտի վճարէ 16ական միլիոն զիցիւրական ֆրանկ, հետագայ 69 տարւայ ընթացքում՝ մօտ 7 և կէսական միլիոն զիցիւրակ. ֆրանկ: Առ այժմ, երկաթուղու բերած հասոյթը բաւական

չէ այս հատուցումները կառուցելու համար, և Թիւրք կառավարութիւնը դիմում է պետական բնույթի օգնութեան: Ենթադրում է, որ 1934 թվականից սկսած երկաթուղին ինքը պիտի կարողանայ վճարել տարեկան պարտքը, բայց տիրոջ տալանալը Ը Թիւրքիայի տնտեսական կենսիքի ընթացքը ոչ մի հիմք չեն տալիս նման լուսանտութեան:

Բաղդադի երկաթուղու Բոզանտի-Նիսիքի մասի շահագործումը, (632 կիլոմետր) 1921թ. 9 մարտ և 20 հոկտ. համաձայնութիւններով, յանձնուած է Փրանսացիներին: Այս գծի վրա ծախսուած դրամի մեծ մասը (12,281 միլիոն ոսկի լիբա) նոյնպէս մտնում է Թիւրքական պարտքի մէջ: Այս դիմն էլ զեռ վնաս է բերում և նոյնպէս ծանրացած է Թիւրքական բնույթի վրա:

Այսպիսով, եթէ ամփոփելու լինենք Թիւրքիայի երկաթուղային անտեսութեան մէջ ներգրւած օտար դրամագլուխները, կը ստանանք հետեւեալ պատկերիկ գումարը.

Զմիւռնիա Ալսիմի գիծ	ոսկի լիբա	± 587,747
Զմիւռնիա-Գասապայի գիծ		6,170,000
Մուսափա-Բրուսայի գիծ		156,000
Արեւելեան գիծ		2,000,000
Անատոլիա		23,250,000
Բաղդադի		12,281,000
Գումար՝		48,444,747

Երկաթուղիներից յետոյ, օտար դրամագլուխը ամենից աւելի ամուր հատած է Թիւրքիայի համալսիմ տնտեսութեան մէջ: Այստեղ, առաջին տեղը բռնում է Փրանսական Հեթակիւս Ընկերութիւնը, որ շահագործում է Զոնգուլուքի սոխահանգիքը: Զոնգուլուքի շրջանի հանգրի արժէթէ կէս քաճիւրուած է այս ընկերութեան ձեռքին, որ հիմնուած է 1896թ. և ունի, պահեստի գումարի հետ միասին, 30 միլիոն ոսկի ֆրանկ, կամ 1,320,000 ոսկի լիբայի հասնող դրամագլուխ:

Զոնգուլուքի հանգրի մի կիւրուր մասն էլ գրուելու է Բենտէր իրէլիլի ընկերութեան ձեռքը: Այս ընկերութիւնը կազմած է պատերազմից յետոյ, 11,400,000 ֆրանկ դրամագլուխով - Կիլիկիա դրամագլուխը գերմանական իրէլիլի և չինա Բոսապա:

Փրանսացիները առաջնակարգ տեղ են գրուում և արճճի արտադրութեան մէջ: Երանց է պատկանում Բալիա-Կարապիլիկ ընկերութիւնը՝ հիմնուած 1892թ. է և կէս միլիոն ոսկի ֆրանկով: 1920-27 թվականներին այդ գումարի վրա աւելացած է եւս 26 միլիոն թուրք ֆրանկ: 1927թ. ընկերութիւնը ունեցաւ 146 հազար թուրք լիբայի վնաս:

Իսնդրմայի բոսապի շահագործումը գտնուում է անգլիացիների ձեռքը:

Գերմանական դրամագլուխը մասնակցում է Բուրգարդայի արճճաթ-արճճային հանգրի և Արգանայի պղնձի արդիւնաբերութեան մէջ:

Մօտաւոր հաշուով, Թիւրքիայի հանգրային արդիւնաբերութեան մէջ ներդրած օտար դրամագլուխը հասնում է 18,804,000 թուրք, կամ 2,224,000 ոսկի լիբայի:

Մշակիլի արդիւնաբերութեան մէջ օտար դրամատիրական հաստատութիւններից յիշենք The Oriental Carpet Manufactures Ltd անգլիական ընկերութիւնը, որ ունի սեփական գորգի գործարաններ և միտամանակ գորգի գնում է կատարում: Ընկերութեան դրամադուլան է 1,250,000 անգլ. ոսկի, սակայն, այս գումարի մի մասը ընկնում է ընկերութեան Պարսկաստանի և Հնդկաստանի ձեռնարկութիւնների վրա:

Զմիւռնիայի Արդիւնաբերական Ընկերութիւն, 4 միլիոն ոսկի ֆրանկի դրամալիւով. դրամագլուխ է մատուցակի (reglisse) մշակութեամբ:

Չմիւռնիայի Վալիկա ընկերութիւնը՝ 240,000 անգլիական ոսկի դրամազլիտով, պատրաստում է կաշիի մշակութեան նիւթ։
 Smyrna Pig Pa-kers Ltd Թուրք առևտրա-արդիւնաբերական ընկերութիւնը՝ 600,000 անգլիական ոսկի դրամազլիտով։

Արայիտի և Եսկի շիւարի ցեմենտի գործարանները (յոնի-խալական ընկերութիւն)՝ 497,500 Թուրք լիրա դրամազլիտով։

Բոմոնտի դարեջրի գործարանը (գիցեցրական)՝ 6 միլիոն գլեց. Փր. դրամազլիտով։
 Ալպորուի և Ուշակի շաքարի գործարանները, Հիմ-նած 1926թ., որոնց 3 միլիոն Թուրք լիրայի դրամազլիտ կէսը օտար է։

Drognerie Centrale — գեղադորձական անգլիական ընկերութիւն՝ 200,000 լիրա դրամազլիտով։
 Առետրի, արդիւնաբերութեան և երկրադործութեան Ագայայի ընկերութիւն՝ 200,000 լիրա դրամազլիտով։

Չմիւռնիայի բամբակի ընկերութիւն՝ 100,000 լիրա դրամազլիտով։
 Emrys Confiance Cartal — պահածոյ ընկերութիւն, գլխաւորապէս, յունական դրամազլիտով՝ 150 ֆարաք լիրա։

Cie Industrielle du Levant — բելգիական ընկերութիւն, որ զբաղւած է բամբակի գտումով. դրամազլուրը 500,000 լիրա։

Այսպիսով, մշակիլի արդիւնաբերութեան մէջ ներդրւած է 24.135,000 Թուրք կամ մօտ 2,840,000 ոսկի լիրայի օտար դրամազլուր։

Վաղափայլի մեծնարկութիւններից օտար դրամազլուր տեղ ունի ջրի, էլեկտրականութեան, գազի, հեռախօսի, կոշիկի, փոխադրական միջոցների գործի մէջ։ Այս կարգի մեծնարկութիւններից յիշենք Պոլսի հեռախօսի ընկերութիւնը (անգլիական)՝ 662,116 ոսկի կամ 5.327,986 Թուրք լիրա դրամազլիտով։

Բելգիական էլեկտրաբարձի ընկերութիւնը, մօտ 35 միլիոն գիցեցրական Փրանկ, կամ 1 1/2 միլիոն Թուրք լիրա դրամազլիտով։

Ղալաթա-Բերայի վերելքի ներցնողին — 165,000 ոսկի լիրա դրամազլիտով բելգիական մեծնարկութիւն։
 Ելեկտրականութեան և գազի ընկերութիւնը, նոյնպէս բելգիական մեծնարկութիւն 41 միլիոն գ. Փր. դրամազլիտով։ Ընկերութեան գոյքի արժէքը հաշուում է 56.164,038 գ. Փրանկ։

Ջրի ընկերութիւնը — ֆրանսական, 1,035 միլիոն Թուրք լիրա դրամազլիտով։

Չմիւռնիայի էլեկտրական լուսաւորութեան և ելեկտրաբարձի ընկերութիւն — բելգիական — 78.800 ոսկի լիրա դրամազլիտով։

Չմիւռնիայի ջրի ընկերութիւն — բելգիական — 3,750,000 ոսկի Փրանկ դրամազլիտով։

Բուխարայի ջրի ընկերութիւնը — գիցեցրական — 750,000 լիրա դրամազլիտով։

Գառնեջոյի գազի ընկերութիւնը — բելգիական — 11,500,000 ոսկի Փրանկ արժող գոյքով։

Չմիւռնիայի գազի ընկերութիւն — ֆրանսական — 100,000 անգլիական ոսկի դրամազլիտով։

Թիւրքիայի քաղաքային տնտեսութեան մէջ մըտցած օտար դրամազլիտի համարումարը, հասնում է 5.360,000 ոսկիի։

Օտար դրամազլուր կարևոր տեղ ունի և Յուսահանգստային ու շինարարական գործի մէջ։ Գարափների, նաւամատոյցների, նաւաշինարանների և, առհասարակ, նաւային տնտեսութեան մեծ մասը ապրում է օտար դրամներով։ Այսպէս, Պոլսի քարափի, բեռնաւազանի (dock) և պահեստների ղեկավարութիւնը ֆրանսական մեծնարկութիւն է, որի ընդհանուր դրամազլուրը, 1927ին, կազմում էր 37,783.000 Փրանկ. գոյքերի արժէքը՝ 43.666,000 Փր.։ Հակառակ այսպիսի

սի խոշոր դրամազլիտի, ընկերութեան եկամտները մեծ չեն. 1927ին զուտ հասույթը 807,198 Թուրք Փրանկ էր կամ 64,575 Թուրք լիրա։

Վերին Ոսփրի (Սահնիլա) գոկիրը նոյնպէս ֆրանսական են 264,000 ոսկի լիրա դրամազլիտով։

Անշարժ կալեցի Պոլսի ընկերութիւնը զարգեալ ֆրանսական մեծնարկութիւն՝ 480,000 ոսկի լիրա դրամազլիտով։ Այս ընկերութիւնը զբաղւած է անշարժ կալեցիի շահագործումով և փողոցների ու կոյուղիների շինութեամբ ու նորոգութիւններով։ 1926ին ընկերութիւնը մնա ունեցաւ, իսկ 1927ին՝ 39,587 Թուրք լիրա շահ։

Դիւմալի շինարարական մեծնարկութիւնը 1924թ. կազմած գիցեցրական ընկերութիւն է 20 միլիոն Փր. դրամազլիտով։ Պոլսի քաղաքացիական տնտեսական շահմանութիւններն է կատարում։

Նաւահանտային և քաղաքային տնտեսութեան մէջ ներդրւած օտար դրամազլուրները հասնում են 2,853-000 ոսկի լիրայի։

Ինչ խօսք որ, օտար դրամազլուր խոշոր տեղ է բռնում և Թիւրքիայի դրամատոնրի գործառնութեանց մէջ։ Թիւրքիայում կայ 20 օտար դրամատուն, կամ աւելի ճիշտ, դրամատոնրի բաժանմունքներ։ Այդ դրամատոնրի միայն մի մասի վարչութիւնն է գտնուում Թիւրքիայում, ինչպէս Բանկ Օթթոմանի, որ անգլիական ֆրանսական մեծնարկ է, Հիմնած 1863թ.։ Յանձնառութեան պայմանաժամը լրացաւ 1925թ., բայց երկարաձեռք էւ 10 տարով։ 1928թ. դրամատուն դրամազլուրը հաշուում էր 5 միլիոն անգլ. ոսկի, պահեստի դրամազլուրը՝ 1,250,000 անգլ. ոսկի, որոնց ստացւած գումարները՝ 13 միլիոն անգլ. ոսկի։ Դրամատունը գործում է նախկին Օսմանեան կայսրութեան ամբողջ տարածութեան վրա, այլ և Չարսկաստանում, Եգիպտոսում, Յունաստանում։

Անյանիկ Դրամատուն — յոնի-ֆրանսական — որի վարչութիւնը գտնուում է Պոլսում, գործում է և Յունաստանում. դրամազլուրը 2,884,000 լիրա։

Banque Francaise de Pays d'Orient — միայն Թիւրքիայում գործող ֆրանսական դրամատուն, Հիմնած է 1921թ., մօտ 15 միլիոն Փրանկ դրամազլիտով։

National Bank of Turkey — անգլիական դրամատուն, 1,100,000 լիրա դրամազլիտով։

Թէ ինչքան որ օտար դրամատոնրեր Թիւրքիայի բաժանմունքների ներդրումները, գրեթէ անհնար է որոշիլ, որովհետեւ այդ բաժանմունքները առանձին հաշուեկիտներ չեն հրատարակում։ Անկասած է, սակայն, որ այդ ներդրումները շատ խոշոր են, քանի որ Թիւրքիայի թէ ներքին և թէ, մանաւանդ, արտաքին դրամական շրջանառութիւնը ամբողջապէս կատարում է օտար դրամատոնրի միջոցով։ Չուտ Թիւրքական դրամատոնրի միջոցները խիտ աղքատ են։ Այսպէս, 1928 թ.ին, երկրագործական և հանքային-արդիւնաբերական յատուկ նպաստի ծառայող դրամատոնրեր բացառութեամբ, Թիւրք բոլոր դրամատոնրեր դրամազլուրը հաւասար էր 6 և կէս միլիոն Թուրք լիրայի, իսկ գրեց գրաւածը՝ 23 միլիոն։

Այսպէս թէ այնպէս, մօտաւոր ենթադրութեամբ Թիւրքիայի գործող օտար դրամատոնրերի ամբողջ դրամազլուրը 10 միլիոն ոսկի լիրայից պակաս չպիտի լինի։

Անկարելի է հաշուել օտար դրամազլիտի քանակը և Թիւրքիայի առևտրի մէջ, որովհետեւ, նախ, շատ բաժանատրական ընկերութիւններ թէ և անուանում Թիւրքական են, բայց նրանց մէջ մասնակցում է և օտար դրամազլուրը։ Միւս կողմից, հրատարակած նիւթերը ցոյց են առախ կանոնադրում մասնաշաղկապ ընդհանուր դրամները, առանց առանձնացնելու Թիւրքիայի բաժանմունքների մասը։ 1928թ., օրինակ, արձանագրւած էր 120 օտար ընկերութիւն (չհաշուած պաշտօնագրա-

կանները), որոնցից 12 ամերիկեան ընկերութիւններէ դրամագլուխը կանոնադրեալով ցոյց էր տրւած 285 միլիոն դոլար, 3 գերիքական ընկերութիւններինը՝ 128 միլիոն Փրանկ, խորհրդային առևտրական կազմակերպութիւններինը՝ հաշուած էր 70 միլիոն դոլարի և այլն: Իրականութիւնը, ի հարկէ, այսպէս էջր:

Բայց և այնպէս, սխալած չենք լինի, եթէ սանքը, թէ օտար դրամագլուխը վճռական դեր է կատարում թիւրքական առևտրի մէջ: Կարելի է ասել արտածման բոլոր հիմնական ճիւղերը՝ ծխախոտ, բամբակ, ընկուղ, չոր ստուղներ, թուղ, մետաքս, կաղին՝ կազած են օտար դրամագլուխի հետ: Թիւրք առևտրականները միայն միջնորդի դեր են կատարում: Թիւրքական ծխախոտը, օրինակ, որ կարևոր տեղ է բռնում Համաշխարհային շուկայում, ամերիկացիներէ, անգլիացիներէ և հոլանդացիներէ ձեռք է: Մխարխտի Համաշխարհային օսակարանում, Ամստերդամում, թիւրք առևտրականներ չկան:

Աչքի գարնոց է օտար դրամագլուխի դերը և ներածման գործում: Քարիզն, օրինակ, իր բոլոր ճիւղերով, երկրագործական մեքենաներն ու գործիքները, ինքնաշարժ, ածուխ՝ գրեթէ Համբուրգից են ներածուած են օտար ընկերութիւններէ կողմից:

Առևտրի մէջ մտցած օտար դրամագլուխը հասնում է & միլիոն ոսկի լիբրա:

Այսքանով, ի հարկէ, չի սպաւում օտար դրամագլուխի գործունէութիւնը թիւրքիայում: Կան և ուրիշ շատ ասպարէզներ, ուր նա մտել է և շարունակում է մտնել ու զարգանալ: Յիշենք, թէ կուզ, գերմանական Իւնկերս, Փրանսական անթիլի, ամստրիական Չրի. և եիքտրաքարչի, գերմանական կոլոլդի, Փրանսական վաուսի և գիւնայիւթեան և ուրիշ ընկերութիւնները, որոնք հաստատուած են թիւրքիայի գանազան կողմերում:

Վերսիշակ տեղեկութիւններէից, ամենահամեստ հաշուով, կարելի է ներկայացնել թիւրքիայում աշխատող օտար գործն զրամագլուխի հետեւեալ թվական պատկերը:

Երկաթուղիներ (առանց Անատոլու-Բաղ-չաղ գծի)		ոսկի լիբրա
Համբային արդիւնաբերութիւն	12,913,747	
Մշակելի	2,224,000	
Քաղաքային տնտեսութիւն	2,840,000	
Նաւահանգիստ և շինարարութիւն	5,360,000	
Գրոււստներ	2,853,000	
Անւտուր	10,000,000	
	4,000,000	
Գումար՝	40,190,747	

Այսպիսով, թիւրքիայի բովանդակ տնտեսութեան ընդհանուրում, ներկայումս, գործում է 40,190,747 ոսկու Համարժէքով օտար դրամագլուխ, կամ այսօրւայ թիւրքական դրամանիւով՝ գրեթէ կէս միլիարդ լիբրա, որ ինքնին պատկուտի գումար է թիւրքիայի տնտեսական տարրութեան Համեմատութեամբ:

Փաստօրէն սրա վրա ոչէտք է աւելացնել և Անատոլու-Բաղչաղ երկաթուղիի հատուցանելիք գումարը, որ տարւէ տարի պիտի հասնի պետական դրամարկից: Պէտք է աւելացնել և Օսմանէն կայսրութիւնից ժառանգութիւն մնացած պարտքը: Արով, թիւրքիայի մարմնի վրա ծանրացած օտար դրամագլուխի Համարժէքով կը լինի՝

	ոսկի լիբրա
Գործն դրամագլուխ	40,191,747
Անատոլուի երկաթուղի	23,250,000
Բաղդադի	12,281,000
Արտաքին պարտք	86,060,000
Գումար՝	161,722,747

161,722,747 ոսկի կամ շուրջ մէկ միլիարդ եօթ հարիւր հազար թուղ լիբրա:

Այս թիւրք ապացուցանում է, որ ջեմալական թիւրքիան էլ, ինչպէս և սուլթանականը, շարունակում է մնալ օտար դրամագլուխի հակակշի ներքեւ:

Վ.

ԲԱԳՈՒԻ ԹՐԲԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍԸ

Թուրք-Թաթարական տառերի լատինացման խնդիրը յատկապէս խոշոր հետաքրքրութեան առարկայ է Ս. Միտլիեան մէջ: Հակայայտն գրականութիւն է յոյս տեսել այդ խնդրի շարժը: Նոր թիւրքական այբուբենը մտցնող Համադրութեան կոմիտեն իր յատուկ օրգան ունի Բազում, ուսուցիչն լեզուով՝ «Արևիչի մշակոյթը և գիրը»: Թէև մի քիչ ուշ, մեր ձեռքը անցաւ այդ հանդէսի չորրորդ գիրքը (1929թ.), որ արժանի է առանձին ուշադրութեան:

Հանդէսը բացուած է Ադամալ օզիի (այժմ մեռած) մի յօդուածով, որտեղ նկարագրուած են նոր այբուբենի զարգացման արդիւնքները Թուրք-Թաթար սոցիոլոգիների մէջ: Նրա յօդուածը մեզ համոզում է, որ թէ Ուֆայի և Ղազանի համախառնական հոգեւորականութիւնը դիմադրում է և դեռ խոշոր դեր է կատարում և որ, հակառակ բոլոր ջանքերի, մտցւել է երկու այբուբեն՝ մէկը ազդեցական, միւր՝ միայնակ միւս սոցիոլոգիների համար: Ազդեցականին չի կարծիք ընդհանուր, Բաշիբրեայի և Ղազարխանի հակառակութեան հետեւանքով: Ազամալի օզիին կոչ է անում անցնել, այսպէս կուլած, միայնակ այբուբենին, որովհետև զարգեցման գրականութեան կարիքը լիցակալան մտտիկութեան պատճառով շատ մեծ է թուրքմենիստանում, Ուզբեկիստանում, Դաղստանում և այլն:

Այս գալիս են յայտնի գիտնական արեւելագէտներ Բերտելի և Բարտոլդի յօդուածները, որոնցից առաջինը տալիս է արարական այբուբենի բարենորոգման փորձերի պատմութիւնը, իսկ երկրորդը՝ նազարների գրերի մասին:

Մորհրդային մամուլէ էնկիւրիի ներկայացուցիչ Կ. Իւստը «Թիւրքիայի այբուբենի բարենորոգումը» խորագրով թղթականութեան մէջ գծում է լրիւ պատկերը այդ գործողութեան, պաշարը մամուլի և մտաւորականների մէջ, թէև ընդդիմադիր, բայց դրական խոշոր դերը Հիւսէյին Չահիտի, իսլամ աշխարհի բացասական վերաբերմունքը և այն կարևոր դերը, որ կատարել է Մոսկուայի լատինացման որոշումը Բազում: Դեռ 1924ին Փալիս Ռեֆիկին, այժմ էնկիւրիի պաշտօնաթերթի խմբագրիչներից մէկը և Ազգ. Ժողովի անդամ, գրում էր «Ազգայնում Մոսկուայի գէմ և ջրուռն կերպով բացատրում, թէ լատինացման զարգացումը խորհրդային մի շար գիտաբանութիւն է, որի նպատակն է թուրք սոցիոլոգիներից լուրջ նրանց լեզուն»: Նոյն «Ազգամ» մի ուրիշ անգամ գրից, թէ «Լատինական այբուբենը Ազգայնում մտցւում է միայն նրա համար, որպէսզի բոլորովին կտրեն նրա կապերը թիւրքիոյ հետ»:

Մորհրդային լատինացումից յետոյ արդէն թիւրք-

զիսյում էլ յաղթանակում է լատինացման գաղափարը: Այսպէս, «Վարդի» գրում է, թէ Բագուի համաժողովը ընդունեց լատինական այբուբենը բոլոր հարճբարային թուրքերի համար: Թուրքերան, որ կամուրջ է ներուպայի և ասիական ժողովուրդներին միջև, պէտք է հետևի նրանց օրինակին»: Կ: Կրիկի պաշտօնաթերթը գրում է, որ թուրքերին լեզուն պէկտք է տիրապետել մեծ մասը ցամաքի վրա, որ լատինական այբուբենը ոչնչացնում է բոլոր այն խոչընդոտները, որոնք կանգնած են թուրք լեզուի տարածման և անսահման զարգացման առջև: Միև կողմից լատինական տառերը կարծացնեն կապերը ֆարաբի և Թիւրքիոյ հեռաւոր մասերի գիւղերի միջև և հնարաւորութիւն կը տան ոչնչացնելու գանազան րարբանները: Իւտար գրում է, թէ այդ ակնարկ է լատինական, չերքեզներին և քրդերի վրա: Արժէր այս յօդուածը ամբողջովին թարգմանել է լատիների, որովհետև Թիւրքիոյ ջիւր բարեխառն բոլշևիկ շարժողոջը շատ լրիւ պատկեր է տալիս թրքական իրագարծութիւններին:

Հանդէսի մէջ, բացի վարչական որոշումներից, լատինական մասին կան մի շարք լեզուաբանական և բանասիրական աշխատութիւններ էլ: Պրօֆ. Գ. Գուրաշ-գիկը գրում է «Համախառնականութեան փլուզումը Համախառնաբանային պատերազմի ժամանակ» և փաստական տւեալներով նկարագրելով «Համախառնութեան անյաջողութիւնը» վերջացնում է. «Համառոտ սրբագան պատերազմից յայտարարութեան, հակառակ այն բարեբեքին, որ այն և Էսյան» աշխարհում խոտաացւում էր հաւատացեալներին, 12 միլիոն Փրանսահայաստանի մահաւորականներ 412 հազար զինուոր մասնակցութեան Փրանսական բանակին, որոնցից 35.000ը սպանուեց: Եւ հետաքրքիրն այն է, որ այդ զօրքերը գործում էին ոչ

միայն ներուպային ճակատում, այլ և «խալիֆայի» թիւրքական-ուլթանի դէմ»: Այս եզրակացութիւնը կարծիր պրոֆէսորը օգտադրծում է սպացուցանելու համար պանթուրանականութեան կենսունակութիւնը:

Եւ, վերջապէս, թէ և համայնակար, թուրք այս օրգանը մի հակահայ բան էլ պիտի պարունակէ, անշուշտ: Գրական մի թարգմանութիւն փոքր արգայնական գրող Մ. Ֆ. Ա. Ախունդովից, «Հայի Կարա» կամ «Ժայտի արկածներ» կատակերգութիւնը, որի գործող անձինք հայեր և թուրքեր են: Թուրքերը ամենքը ջալ, անվախ, մարտիկ են, հայերը, ընականաբար, վախկոտ: 10 զինուած հայեր միայն երեք թուրքի սպանանքի տակ ձուլւում են իրենց դէնքերը: Հայերը աւագակութիւն չեն անում, որովհետև վախկոտ են և՛ այլն: Եման միտում ունեցող մի գրածքը բոլշևիկեան հանդէսը ներկայացնում է որու հասարակութեան, այսպիսի խմբագրական ծածոթութեամբ. «Ժամանակակից ընտադատութիւնը նրան (Ախունդովի գրածքը) մտցնում է թուրք դասական գրածքների խմբի մէջ»: Ահա «ճիւղապաշտութեան» մի սպացոյց: Ճիշտ չէ՞, որ Մուսաւաթը շարունակում է տիրել Բագուում:

Սմբարդութիւնը աւելացնում է նաև, որ այդ հակահայ գործը չէի իջնում թուրք սկադնիկ զբամայի բեմից»:

Այս էլ մի նմուշ Արքիշէյանի կոմունիստների շարքերում տիրող Հոգեբանութիւնից. Բագուում, կարծիր աստիջ Հովանու ներքոյ և Հայկոմկուսի ընկերների ղեկավարութեամբ քրեմից չի իջնում՝ թուրք հին սպացայնամոլ-աւատապետական Ախունդովի հայաեր Թուրքութիւնը...

Ն. ԲԱՄԻԱՆԵԱՆ

Լ. Ա. ԻՆՏԵՐՆԱՍԻՈՒՆԱԼԸ 1931 - ԻՆ

Ընկերավարական Աշխատանքային Ինտերնասիոնալ Ժանը հանը հողերի մի տարեւորման անցումը, շնորհիւ այն անօրինակ տնտեսական տագնապի, որ քի ահարկու ճիւղանների մէջ է աւել ամբողջ աշխարհը:

Տնտեսական տագնապը դրամատիքական կարգերի էութիւնից բխող մի անխոտապիւր շարք է՝ դամոկրիան սրի պէս կախում աշխատաւորութեան գլխին: Շատ տնտեսագէտներ կարծում էին թէ դրամատիքութիւնը, որ, պատերազմի ժամանակ, պայմաններին յարմարելու այնքա՛ն մեծ ձկունութիւն ջրոյց տուեց, պիտի կարողանայ այլ եւս կանխել այս ջարհը՝ արդիւնազորական մրցակցութիւնները վերացնելով և սպառան ու արտադրանքի միջև համապիտութիւն հաստատելով: Հաշտութեան առաջին իսկ տարիներին, Անգլիայում, Գերմանիայում և Ամերիկայում երևան եկած տնտեսական տագնապները եկան ի դերև հանելու այս լուսառեւ յոյսերը:

Սակայն, ներկայ տնտեսական տագնապը գերազանցում է, տարածութեամբ և խորութեամբ, մինչև հիմա բոլոր եղանակները: Եւ ընդգրկում է միաժամանակ թէ՛ ճարտարաբանութիւն, թէ՛ երկրագործութեան, թէ՛ քանակային և թէ՛ հաղորդակցութեան ճիւղերը: Նրա հուսկու հարածների տակ ճարձատում են ոչ միայն մասնաւոր, այլ և պետական ձեռնարկները — նոյն իսկ պետութիւնները: Ինչ վերաբերում է այս աղտի անմիջական զոհերին կամ գործադուրկներին՝ նոքա այլ և միլիոններով չեն համրուում, այլ տասնեակ միլիոններով...

Լ. Ա. Ինտերնասիոնալը մի վայրկեան իսկ չէր կարող մոտացութեան տալ որ այս ցարը, տիրող սահ

տարակարգի պայմաններում, անդարմանելի է: Քանի կանգուն է դրամատիքական ներկայ սիստեմը՝ տնտեսական տագնապի դէմ առաջադիւղող բոլոր միջոցները զատապարտւած են կիսամիջոցներ մնալու: Որովհետև նրանք կարող են, կարճ կամ երկար ժամանակով, մեղմել տագնապը, բայց չեն կարող մի անգամ ընդմիջում անհնարին գարծնել նրա կրկնութիւնը:

Մեկնելով այս հիմնական տեսակէտից, Ինտերնասիոնալը, ինչպէս և նրան յարած կուսակցութիւնները, ներկայ տագնապը առիթ զարծերն ուժգին զարկ տաւ իրենց պրոպագանդային ընդդէմ դրամատիքութեան և յօգուտ ընկերավարութեան, որ միակ միջոցն է տնտեսական տագնապների պատուհասը արմատախիլ անելու համար:

Այս ծաւալուն պրոպագանդի ազդեցութիւնը շա՛տ աւելի խոր կը լինի, եթէ բուրժուական գաղափարախօսները բոլշևիկեան քրիկերավարութեան» խելագարութիւնները յօգտագործէին՝ աշխատաւորութեան գիտակցութիւնը մթապնելու համար: Անկարող լինելով ուղղակի պայքար մղել ի պաշտպանութիւն դրամատիքական կարգերի, որոնց արատաւորութիւնն այնքա՛ն մերկադած է այս ահռելի տագնապի հետևանքով՝ նոքա բոլշևիկեան «փորձը» և նրանով պայմանաւորուած ջարտաւարն ու թշուառութիւնները խրախիակ են դարձնում ժողովրդական գանգաձաներին սարսափի մատու նելու համար, թէ և իրենք էլ գիտեն, որ բոլշևիկեան յիմարութիւնները ո՛չ մի առնչութիւն չունեն իսկական ընկերավարական հետ: Եւ ցուալի է ստել, որ այս հակապրոպագանդը ապարդիւն չէ անցնում: Անգամ ընկերավարութեան զատական երկրում — Գերման

նիստում, այսօր հարիւր հազարով են համուստ աշխարհում, այսօր, հենքերի վրայ բուրժուական գաղափարասունքի արդեւթիւթեանը, վերապահ է միւշու իւր բացառական դիրք են բռնել ընկերվարական լիցենզիաների հանդէպ...

Նման պայմաններում, Ինտերնասիոնալի և նրա շուրջը համախառն կուսակցութիւնների հակադրամատրիան պրոպագանդայի, լաւադրոյ դէպքում, կարող էր միայն արգելել հանդիսանալ որ համատարած գործարկութեան աղէտը և բուրժուա-համայնվարական յարձակումները ընկերվարութեան դէմ չբարձրանան ընկերվարական շարժումը: Այդպէս էլ եղաւ: Չնայած բոլոր անուպատ պայմաններին՝ միջազգային ընկերվարական շարժումը ընդհանուր առմամբ կարողացաւ պահպանել իր դիրքերը 1931ին, թէև մի-երկու երկրներում, և առաջին հերթին Անգլիայում, նա զգալի փորձութիւններ է ներկայացրել:

Գրամատիրական կարգերի դէմ էր պրոպագանդան պայքարը ուժեղացնելու հետ միասին Ինտերնասիոնալը առաջին հերթին ոգիի բռնի աշխատում էր տիրող տնտեսական տագնապի հետեւանքները մեղմել: Մի-անգամ ընդմիջու լքած լինելով հին մարքսիստական տեսակետն այն մասին, թէ ինչքան վատնայ աշխատաւորութեան վիճակը, այնքան էլ կարգապահ ընկերվարութեան իրականացումը: Ինտերնասիոնալը իր անմիջական մտահոգութիւնները առարկան էր դարձրել գործադուրեցների պաշտպանութիւնը:

Այս մարտի մէջ նոր տեսակէտներ մշակելու կարիք չկար: Գործադուրեցեան դէմ պետական ապահովագրութիւն հաստատելու պահանջը վաղուց է որդեգրուած Ինտերնասիոնալի կողմից: Հարկաւոր էր միայն հետամտել, որ այս պահանջը գանձազան երկրներում իրականանայ և միջոցառումն օրէնքով պարտադիր հանգանակը առնէ բոլոր երկրների համար:

Տնտեսական տագնապի երկրորդ կարևոր հետեւանքն է աշխատավարձի նւազեցումը, որին դիմում են գործատուները բոլոր երկրներում՝ օգտուելով աշխատող ձեռքերի առատութիւնից և դեռ եւս չկազմակերպուած աշխատատարական սարքերի մրցակցութիւններից: Ինտերնասիոնալը առանձին ուժեղութեամբ պէտք է պայքարէր այսօրինակ միտումների դէմ, մասնաւորապէս աշխատավարձի նւազեցումը, սահմանափակելով ժողովրդական գանդւածների սպառողական կարողութիւնը, աւելի՛ եւս սրում է տնտեսական տագնապը:

Իր առաջարկութիւնները գործադուրեցների և աշխատավարձի պաշտպանութեան մարզերի մէջ գործ դարձնելու համար, Ինտերնասիոնալի Գործադիր կոմիտէն, դեռ եւս 1930ի օգոստոսին, որոշել էր հրաւիրել Արհեստակցական Միութիւնների Միջազգային Դաշնակցութիւնը, մի խումբ Յանձնաժողով կազմելու և ընդհանուր գործադուրեցների ծրագիր մշակելու համար: Նոյն թիւի աշխանք կազմակերպուած այս Յանձնաժողովն իր աշխատանքներն աւարտեց 1931ի յունուարին, ներկայացնելով Ինտերնասիոնալին և Արհեստակցական Միութիւններին Միջազգային Դաշնակցութեանը մի ընդարձակ գեղեցագիր, որի մէջ նախաձեռնութիւն պարզաբանուած են ներկայ տագնապի տնտեսական և քաղաքական պատճառները, ինչպէս և այն միջոցները, որոնց պէտք է դիմեն աշխատատուութեան քաղաքական և արհեստակցական կազմակերպութիւնները՝ տագնապը մեղմելու և աշխատատուութիւնը նրա աւերիչ հետեւանքներից պաշտպանելու համար:

Յանձնաժողովի եզրակացութիւնները գրեթէ առանց փոփոխութեան ընդունուեցին Ինտերնասիոնալի Համադրամարի կողմից (Վեննա): Նրանք ամփոփուած են այն բանաձեւերի մէջ, որ տպուած են «Իրօչալի»-ի անցեալ տարւոյ № 9-ում:

Ինչպէս մինչև Համադրամարը, նոյնպէս և նրանից յետոյ, Ինտերնասիոնալին յարած կուսակցութիւններն այս եզրակացութիւնների վրէժն առաջնորդում 1931ին՝ տնտեսական տագնապի և նրա հետեւանքների դէմ պայքարելու: Այս բազմաթիւ և բազմապիսի պայքարների արժէքը դնահատու համար, բաւական է ասել, որ ոչ միայն գործադուրեցների և աշխատավարձի պաշտպանութեան հարցեր, այլ և շարժարկների ջրտեսուծ մտահայ աշխատանք սահմանելու հարցն այնքան ժողովրդական են դարձել հանրային կարծիքի մէջ, որ թէ՛ բուրժուական տնտեսագէտները և թէ՛ իշխանութեանց ներկայացուցիչները չեն համարձակուած բացարձակօրէն նրանց դէմ արտայայտուել...

Քաղաքական մարզի մէջ, Ինտերնասիոնալի դիտարուչարութիւնը, անցեալ տարիներին, կենտրոնացած էր զինաթափութեան հարցի վրայ, որ Ինտերնասիոնալի տեսակետով ամենաշահալիկ նախապայմանն է հանդիսանում խաղաղութիւնը տեսական դարձնելու համար:

Գիւր եւս Իրիւսելի Համադրամարում որոշուած էր ամէն միջոցի դիմել Ձինաթափութեան Խորհրդաժողովի արդարացնելու համար: Համաձայն այս որոշման՝ Ինտերնասիոնալի Գործադիր կոմիտէն աշխատաւորական միւս կազմակերպութիւնների հետ միասին (Արհ. Մ. Միջազգ. Դաշնակցութիւն, Ընկերվարական Երիտասարդութեան Ինտերնասիոնալ, Բանուորական Մարզանքի և Ֆիդելիտատի Դաշնակցութեան Միջազգային Միութիւն եւն) 1929ի գարնան բազմաթիւ երկրներում ժողովրդական հնախապէս ցույցեր կազմակերպեց և մօտ 13-000 հանրապրութիւնների զրկելու տեց Արգենտինայի Կապիտալիստական կողմից նշանակուած Յանձնաժողովին, որ Ձինաթափութեան Խորհրդաժողովը նախապատրաստուելու պաշտուած ուներ:

Այս ցույցերի տպաւորութեան մասին յատկանշական վկայութիւն է փայտ յիշեալ Յանձնաժողովի նախագահ Լուզո՛ Յանձնաժողովի բացման ճառի մէջ (1929) թիւ ապրիլ 15ին) —

«Հանրային կարծիքը — ասում է նա — անհամբեր է դարձել և իրաւոր: Դրա նշանակալից ապացուցն են այն բազմաթիւ նամակները, որ եւ, իբրև ձեռ Յանձնաժողովի նախագահ, ստանում եմ մի քանի քաղաքներից քի վեր: Նամակները բխում են գլխաւորապէս գանապան երկրների բանուորական կազմակերպութիւններից, որոնցից մի քանիսը միլիոններում անդամներ ունեն: Այս նամակների մէջ արտայայտուած է, որ քաղաքիկ սպասում են, թէ նախապարտատական Յանձնաժողովը պէտք է աւարտէ իր աշխատանքները, որպէսզի... վերնապէս իրականանան զինաթափութեան խառնուումները, որ այնքան հանդիսաւոր կերպով սրտած են աշխարհի բոլոր ժողովուրդներին... Ինքորը եմ քարտուղարութեան մի ղեկուցարար պատրաստեմ այս հանրապրութիւնների թիւ և աղբիւրների մասին: Ինձ թւում է, որ նոցա ցույց են տալիս թէ հանրային կարծիքը, և մասնաւորապէս աշխատաւորական շրջանների կարծիքը, ինչքան կարեւորութիւն են տալիս որ մենք նախապարտատական Յանձնաժողովի աշխատանքները անյապաղ յաջող վարձանքի հասցնենք: ... Շուտով ձեռ որ սա (հանրային կարծիքը), առաջ կը մղէ կառավարութիւններին, որոնց ընկալքը այս ապաւերկում, աւելի քան ո՛րեւ որիքը ասպարէզում, մեծապէս կախած է ժողովուրդների կամ զիջք:

Ինտերնասիոնալի որոշմանը հիմնները հաշի առնելով էր, նա՛ և, որ Անգլիայի աշխատաւորական կառավարութիւնը, 1929ի աշնանը, նախաձեռնութիւն ըստանձնեց նախապէս զինուորների կրճատման գործը, որ մեռած կէտի վրայ էր ընկել նախորդ պահպանողական կառավարութեան շնորհիւ, վերականգնանայելու, որպէսզի ընդհանուր զինաթափութեան ճանապարհը հարթի:

Այս կենդանի հետաքրքրութիւնը դէպի գինեթափութեան հարցը շարունակեց Ինտերնասիոնայի մէջ և 1930ին, երբ նորից ժողովրդական խոշոր ցոյցեր տեղի ունեցան Բեյթիկում, Հոլանդիայում, Գերմանիայում, Ֆրանսայում և ուրիշ երկրներում՝ Ձինաթափութեան Պորճրգաժողովը փութացնելու պահանջով:

Վերջապէս, նոյն թիւ դեկտեմբերին, Նախագահութեան Յանձնաժողովը աւարտեց իր աշխատանքները, և Ազգերի Դաշնակցութեան Պորճրգաժողովը, անցեալ տարւոյ յունւար 23ին, որոշեց Ձինաթափութեան Պորճրգաժողովը դուժմարեկ 1933ի փետրուար 2ին:

Պորճրգաժողովի գումարման որոշումը նոր խթան հանդիսացաւ Ինտերնասիոնայի համար՝ իր պայքարը յօշուտ ընդհանուր գինեթափութեան աւելի՛ ևս բուռն թափով վերածարձելու համար:

Անցեալ տարւոյ փետրուարին, Ինտերնասիոնայի Գործադիր կոմիտէն, հանգամանորէն զբաղւելով այս հարցով, ճշտեց այն տեսակէտները, որոնցով պէտք է ղեկավարւելին ընկերակազմակա հուսակցութիւնները գինեթափութեան համար պայքարելիս: Դրա հետ միասին, նա որոշեց նախ այս հարցը Վեննայի Համազուժարի առաջ տանել և ապա՝ ԱրՇ. Միութեանց Միջազգային Դաշնակցութեան հետ միասին նորից մի խոսքը Յանձնաժողով կազմել երկու կազմակերպութիւնների պահանջներն ու վարքագիծը ճշտելու համար:

Յանձնաժողովը անցեալ տարւոյ ապրիլին (Բրիւսէլ) և յունիսին (ժընևե) մի շարք նկատելի կարացնելով՝ կատարեց իր վրա դրած պարտականութիւնները: Նրա ձեւակերպած պահանջները արտայայտւած են այն բանաձևի մէջ, որ Ինտերնասիոնայը իւրացրեց Վեննայի համազուժարում և որը լոյս տեսաւ ՀԵՐՅԱԿԻՅԻ վերջինեալ թիւ մէջ:

Բացի քահանջ՝ Յանձնաժողովը նախագծեց մի շարք յոյճեր, որ պիտի կատարէին երկու կազմակերպութիւններն էլ՝ յօղուտ գինեթափութեան ուժեղ հանրային կարծիք տեսնելու համար: Յանձնաժողովի գլխաւոր նախագծումներն էին. Վեննայում դուժմարելիք Աշխատաւորական Ողիմպիական և Ինտերնասիոնայի Համազուժարը օգտագործել հակաազգայնական ցոյցեր կատարելու համար: Սահմանամերձ քաղաքներում և շրջաններում հակապատերազմական ցոյցեր անել: Բոլոր վայրերում ժողովրդական մեծ միտնիցներ կազմակերպել՝ միջազգային հետադիմերի կազմով: Պորճրգաժողովներում զննութեան նիւթ դարձնել գինեթափութեան հարցը: Ժողովրդական հակապատերազմներ ներկայացնել գումարելիք Պորճրգաժողովին՝ գինեթափութեան պահանջով: Ձինաթափութեան Պորճրգաժողովի զբաղման ընթացքին (մարտ սուսում) Ինտերնասիոնայի և ԱրՇ. Մ. Մ. Դաշնակցութեան ընդհանուր Պորճրգաժողով գումարելու: Եւ այլն:

Այս նախագծումներէ մի մասն արդէն իրականացած է, իսկ միւսներն իրականանալու վրա են: Ինտերնասիոնայի այս ցոյցերը մինչև օրս այն ազդեցութիւնն ունեցան, որ Ձինաթափութեան Պորճրգաժողովը յիտաձգել տալու գլուխը, որ ընձեռուած էին մի քանի կոտակարութիւնների կողմից՝ ապարդիւն անցան: Նրանց հետագայ ազդեցութեան մասին որոշ խօսք ասելու համար, պէտք է սպասել Պորճրգաժողովի աշխատանքների վարձանին:

Միջազգային քաղաքական կենտրոն մէջ երկրորդ խնդիրը, որով Ինտերնասիոնայն զբաղւել է անցեալ տարւոյ ընթացքին՝ Հատուցումների շարահատուի խնդիրն է, որ մինչև այժմ գամոկանան արբ պէս կարւած է մնում աշխարհի խաղաղութեան գլխին, իսկ հիմա կարեւոր ազդակի դեր է կատարում նաև Համաշխարհային տնտեսական տաղանայի մէջ:

Ինտերնասիոնայի գիրքը ճշուած է այս հարցում երկար տարիներից ի վեր — պատերազմական պարտաք-

րը պէտք է փոխադարձաբար ջնջւեն և Գերմանիայի հատուցման պարտքը պէտք է կրճատուի՝ Համապատասխան նրա վճարելու կարողութեան և Ֆրանսային ու Ինչիլիին պատճառած պատերազմական աւերի իսկական արժէքին:

Նոր խօսք չունէր ասելու այս մասին Ինտերնասիոնայը: Սակայն, ամէն անգամ, երբ Հատուցումների շուրջը նոր թննուի էր ստեղծուում՝ նա Հարկադրում էր իր ձայնը բարձրացնել և հանրային կարծիքի ուշադրութիւնը հրահրել այն վտանգների վրա, որ կարող են առաջանալ ընդհանուր խաղաղութեան և աշխարհի տնտեսական բարգաւաճման համար՝ եթէ Հատուցումների հարցը իր ներկայ ընթացքի մէջ մնայ:

Այսպէս, օրինակ, անցեալ ամսաւ, երբ Գերմանիան տնտեսական փլուզման առաջ էր կանգնած՝ Ինտերնասիոնայը, Վեննայի Համազուժարում ուժովն ձայն բարձրացրեց՝ պահանջելով, որ պատերազմական պարտքերի և գերմանական Հատուցումների խնդիրը բանաւոր կերպով լուծւի: Իրիւնդիքի վերջին յայտարարութիւնը, որ կնքւած դաշնագրում միակողմանի վճռով խախտելու ընդդէմ ունէր, նոյնպէս անարժանացնոյ չմտք Ինտերնասիոնայի մէջ:

Այս անընդհատ միջամտութիւնները զգալի դեր են կատարել Հանրային կարծիքը, Հատուցումները կրճատելու խնդրի համար, նախադրատեսակու տեսակէտից: Եւ եթէ այսօր նոյն իսկ Ֆրանսայում ձայներ են լսուում, թէ պէտք է վերջ տալ այս խնդրին՝ Գերմանիայի պարտքը կրճատելով կամ ոչնչացնելով՝ նա պէտք է զգալի շափով բացատրել այն ազդեցութեամբ, որ կազմակերպւած աշխատարարութիւնը դիտում է բանեցնել հանրային Հարիւրի վրա:

Պորճրգային Հանրապետութիւնների Միութեան ներքին գործերով Ինտերնասիոնայը, անցեալ տարեշրջանին, շատ չզբաղւեց — բացի մի երկու մանր դէպքերից, երբ նա պէտք է խորանէր խորհրդային Իշխանութեան կամ Երրորդ Ինտերնասիոնայի զրոյարտութիւնները: Թէ է. Ու. Ինտերնասիոնայը կամ նրան յարած կուսակցութիւնները ուժգնաբար միջամտութիւններ (ինտերվանսիոն) են կազմակերպում ընդդէմ Ու. Հ. Միութեան:

Այս կրակուրական կեցուածքի պատճառն այն է, որ «հնգամսայ ծրագրի» շուրջը տարակարծութիւններ կան Ինտերնասիոնայի մէջ: Ամենքը համամիտ են, որ այդ ծրագիրը չէ ներդաշնակում ընկերակազմակա քաղաքականութեան մեթոդներին, բայց ամենքն էլ այն կարծիքին չեն թէ, մեթոդների գարտուղութեան պատճառով, կարելի է այնուխի դիրք բռնել, որ խանգարել կարող է Ու. Հ. Միութեան մէջ կատարուող գործը — մասնաւոր որ այդ գործի ձախողող կարող է միջազգային բուրժուազիայի հայրն իւր ըսել:

Քաղաքական ընտրութեամբ ուրիշ խնդիրներ ևս զբաղեցրել են Ինտերնասիոնային անցեալ տարեշրջանին, ինչպէս օրինակ, Աւստրո-գերմանական զանչուրսի խնդիրը, որի առթիւ Ֆրանսո-գերմանական յարաբերութիւնները բաւական բարւել էին, Հնդկաստանի պատագրութեան հարցը, որի լուծման համար անդուհեղական խորհրդաժողով էր դուժմարած Լոնդոնում, քաղաքական հայտնակներին Փաշտասական և բողճեփիկան վայրաբնութիւնների դէմ պաշտպանելու խնդիրը և, վերջապէս, Ազգերի Դաշնակցութիւնը ժողովրդավարական հիմունքներով վերակազմելու հարցը, որի ուսումնասիրութեան համար Ինտերնասիոնայը, դեռ Իրիւսէլի համագումարի օրերից, մի առանձին Յանձնաժողով էր նշանակել թեղիքական ծերակուտական Դը Իրիւսերի նախագահութեամբ:

Ինչոր այս հարցերի մասին, Ինտերնասիոնայի

Գործադիր կոմիտէն կամ Բիւրօն օրը-օրին արտայայտել են, որպէսզի ընկերվարական կուսակցութիւնները ի վիճակի լինէին համապատասխան ընթացք բռնել՝ նրանց լուծուժը հետապնդելու համաձայն ազգերի ինքնորոշման իրաւունքի, Ժողովրդավարական ընկերվարների և համաշխարհային խաղաղութեան պահանջները:

ԸՅՔ համեմատելու լինենք Ինտերնասիոնալի անցեալ տարւայ և նախորդ տարիների ընդհանուր գործունէութիւնը՝ կը տեսնենք որ նա, անցեալ տարի ոչ այնքան յարձակողական, որքան պաշտպանողական դիրքերի վրա էր կանգնած: Սրա գլխաւոր պատճառն այն է որ դաժման և յարատեւ գործազրկութիւնից զատ-նացած ու չլծած գործաւտուրութիւնը շատ երկրներում իսթարած էր իր ընկերվարական տրամադրութիւնները մէջ: Օրւա հացի հրատապ պահանջը, դրդում

էր նրան մի ելք գնորել՝ օր-առաջ իր անտանելի վիճակից դուրս գալու համար, ուստի և նա, շատ երկրներում, անհամեմատ աւելի՝ դիւրութեամբ քան նախորդ տարիներին, ականջ էր կախում ավակողմեան և ձախակողմեան ամբոխավարներին, որոնք զօրէր թափելու հետանկարներ էին բանում նրա որոնող աչքերի առաջ: Այս վարձոց ամբոխավարութիւնը ճիշտ է, չկարողացաւ քայքայել ընկերվարական շարժումը, բայց զգալի տարամուտիւն մտցրեց յախատուողական տրամադրութիւնների մէջ ընկերվարական պայքարի մեթոդների խնդրում:

Այսպիսի պայմաններում, Ինտերնասիոնալը նախորդ տարիների յարձակողական քաղաքականութեանը հետեւել չէր կարող, ի հարկէ: Իայց նա, ընդհանուր ստամբ, կարողացաւ պահել իր դիրքերը, և սա, տւեալ պայմաններում, յաղթանակ պէտք է համարել:

Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

ԿԱՐՄԻՐ ԳԾԻՑ ՆԵՐԱ

(Խորհրդ. Միութիւն և Հայաստան)

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Անցեալ ամառյ ընթացքին Խորհրդային Միութիւնը բունած էր Ժողովատեւելով: Կոմկուսը նախապատրաստում էր կուսակցութեան 17րդ համագումարին, յունւար 30ին: Ամբողջ ամիս անհաշիւ Ժողովներ՝ դիւզական բլիշներէց սկսած մինչեւ երկրային խորհրդա-Ժողովներ: Լրագիրները լեզուցեին արտասանւած ճառերով: Կեանքի միւս երևոյթները յետին կողմ մղեցին:

Ժողովների կենտրոնական առարկան «հնգամեակն» էր իր անցեալով և ապագայով: «Ենթորդ վճռական ստրուտ» հաշիւակար, հակառակ պաշտօնակաջ լաւտեստեան, այնքան էլ գոհացուցիչ չէ: Արդիւնաբերութեան մեծ մասը նշանակւած ծրարքը չի լրացրել, մասաւանդ ծանր արդիւնաբերութեան հիմնական ճիւղերը: Այսպէս, քարածուխ որոշւած էր հանել 83,6 միլիոն տոն, հանւած է միայն 57,6 միլիոն, այսինքն՝ 67,9%: Նաթ պիտի արտադրէր 25,6 միլիոն, արտադրւած է 22,3 միլիոն — 87,1%: Թուլ պիտի պատրաստէր 8 միլիոն տոն, պատրաստւած է 4,9 միլիոն — 61,2%: պողպատ՝ 8,8 միլիոն տոն, պատրաստւած է՝ 5,3 միլիոն — 60,2%, երկարական ոյժ պիտի ստացէր 12,7 միլիարդ կիլոուատ, ստացւած է 10,6 միլիոն — 83,5% և այլն: Մի շարք ճիւղերում, ինչպէս պողպատ, Թուլ և այլն, արտադրութիւնը անցեալ տարւանից էլ քիչ է, մինչդեռ անցեալ տարի էլ որոշւած ծրարքը թերակատարւեց և ճեղքած քները փակելու համար պէտք եղաւ դիմել շատուկ եռամսեակի:

Գիւղատնտեսութեան հաւաքականացման քնազաւառում ծրարքի քանակական կողմն, ըստ երևոյթին, կատարւած է, այսինքն՝ բունի կիրպով կազմած են պատշաճ քանակութեամբ կոլխոյներ, բայց, ըստ էութեան, հաւաքականացած գիւղատնտեսութեան արտադրական կարողութիւնը ոչ միայն չի բարձրացել, այլ որոշ ճիւղերում ընկել էլ է:

Փայլուն շաղթանակներ ձեռք չեն բերւած և սուկտորի, մասակարարման, ելեմուտքի և հաղորդակցութեան միջոցների զարգացման ասպարէզում:

Այս բոլոր խնդիրները քննեցին Կենտգործկոմում, որի նստաշրջանը փակուեց յունւար 2ին: Ընդունեց 1932 թ. տնտեսական ծրարքը, որ պայլի շարժով բարձրա-

ցնում է արտադրանքի չափը: Այսպէս, որոշւած է արտադրել 90 միլիոն տոն ածուխ, 28 միլիոն տոն նաթ, 9 միլիոն տոն թուլ, 9,5 միլիոն տոն պողպատ, 16,7 միլիարդ կիլոուատ ելեկտրականութիւն և այլն:

Ինորը է, որ Կենտգործկոմի նստաշրջանի փակումից անմիջապէս յետոյ, յունւար 5ին, հրատարակեց Կոմկուսի Կենտկոմի հրամանը, որով հաշիւաբարք է ենթարկում Ժող. Տնտ. Խորհուրդը և նրա գործառնութիւնները փոխանցում են երկու նորհաստատուող նախարարութիւններին: Ըստ Սահմանադրութեան, նախարարութիւններին լուծման և հաստատման իրաւասութիւնը սպառկանում է Կենտրոնկոմին և Ժողովխորհրդին, բայց այս անգամ հրամանն արձակեց «կուսակցական գծով», իսկ Կենտգործկոմն ու Ժողովխորհը միայն ներազործեցին կուսակցութեան որոշումը: Ստալինը, կարծես, դիտմամբ ուզում է ընդգծել Կոմկուսի առաջնութիւնը. կառավարութիւնը կուսակցութեան ենթադն և գործադրող իշխանութիւն է: Կենտգործկոմը, որ Խորհրդ. Միութեան մէջ կուշւած է խորհրդարանի դեր կատարելու, յետին թուով հաստատում է Կոմկուսի որոշումները:

Խորհրդ. Միութեան ներքին կեանքի միւս երևոյթների վրա այս անգամ կանգ չենք առն. ինչպէս ասացինք, սշադրութեան գլխաւոր առարկան Ժողովներն են:

Խորհրդային Հասարակաշխութեանը խորը տեղ է տայիս և արեմանակ հարեակներէի հետ վարուող քանակցութիւններին: Անցեալ տարւայ ընթացքում կարելի եղաւ սկզբունքային համաձայնութեան յանդիլ Փարիզի և Մոսկուայի միջև «ոչ-յարձակման» դաշինքի մտայն: Սակայն, Յրանալի համար նախապայման էր համաձայն գաշինքի կնքումը նաև Խորհրդ. Միութեան և Լեհաստանի ու Ռումանիայի միջև: Այդ առթիւ քանակցութիւններ սկսեցին մի կողմից Լեհաստանի ու բուլղարիկների միջև Մոսկուայում, միւս կողմից Ռումանիայի և բուլղարիկների միջև Սիդլայում և, վերջապէս, երրորդ կողմից, բուլղարիկների և բալտիկան պետութիւնների ու Ֆինլանդիայի միջև: Բանակցութիւնները դրժարացեալ հարցեր էին, մասնաորպայէս, իհարկէ, իրական և բուլղարիկ-ռումանական սահմանների շուրջ կազմ վէճերը: Լեհաստանի սահմանի հարցն երեւում է կարգադրւած, և նախնական համաձայնութիւն է ստո-

րագրած իհնական դեպքան Պատեկի և արտօղկոմի միջև: Միում է շուտևս իհարթարայի կնիւնը, որ առանձնապէս բարեպնտում է ըրչեկի-ուսական յարբերութիւնները:

Այսպէս թէ այնպէս, մասնաւոր վերջին ամուսյ ընթացում, Մոսկւան գգալի կենդանութիւն է ցոյց տալիս և աշխատում է արագացնել «ու-յարձակման» դաշինքի կնքումը Տրանսսիի և իր արեմտան հարեւանների հետ: Այդ փութութեան շահանալի կը կրի, եթէ ի նկատի ունենանք Հեռուստր Արեւելքում կուտակող մասյ ամպլու և փաստական պատերազմի վրձակը Չինաստանի ու ձապոնի միջև:

Արտաքին քաղաքականութեան երևոյթներէց արձանագրենք և Պարսկաստանի պայտատկան նախարար Թէմուր Թաշի այցելութիւնը Մոսկւա և գտած ջերմ ընդունութիւնը, այլ և Թէլֆֆիլի Թուշաի ճամբորդութիւնը Թեհրան, Կովկասի գլալով: Անարարակ, խորհրդային վրեանագիտութիւնը շատ է աշխատում բարեկամ Անգրայի ու Ռեհրանի յարբերութիւնները, որով է իր ազդեցութիւնը աւելի կուժեկանայ Պարսկաստանում և Թիւրքիայում: Թուում է թէ նրա ճիգերն անպտուղ չեն անցնում:

ԱՆԻՐԿՈՎԱԾ

Յունարը ծոզովի ամիս եղաւ և Անդրկովկասում: Յունարը 17ին բացեց Հայաստանի Կոմկուսի համագումարը, 19ին՝ Ագրբէջանի և 20ին՝ Վրաստանի: Մինչև այդ եղան տեղական խորհրդաժողովներ, որոնցից ամենաուշադարձը Բագուինն է: Եւ այդ ո՛չ միայն այն պատճառով, որ Բագուն Անդրկովկասի ամենամեծ արդիւնաբերական կենտրոնն է, ուր համապարած է Ագրբէջանի 68,152 կոմունիստներէ 40,347 Տոբին, այլ և խորհրդաժողովի քննած խնդիրներով: Մասնաւոր ուշադրութեան արժանի է Ագրբէջանի Կոմկուսի կենտրոնի քարտուղար Պրոնսկիի ընդարձակ ճարք և նրա առթիւ ծագած վիճարարութիւնները:

Այդ ճառից շատ հետաքրքրական բաներ ենք իմանում: Նա բառակէ կերպով հաստատում է այն ամենը, որ «Իրոյալ»ը անկողնաւ կրկնում է: Այսպէս, նա ասում է, թէ՛ «Լենինի խորտը՝ հաշի առնել Անդրկովկասի տեղական ստանձնաշարութիւնները՝ խաղաղուց» վերջին տարիները: «Անդրերկրումը իր ձեռքն առաւ Համարեա տնտեսական բոլոր հիմնական գործառնութիւնները՝ դիմագուրկ անելով ազգային կենտրոնները»: Ուրից խօսելով, Անդրկովկասեան հանրապետութիւնների բոլոր հիմնական իրաւունքները կենտրոնացան Ֆիլիթիում:

Պրոնսկիին հաստատում է մեր բոլոր գրածները և զիջազիական խնդրի մասին, մասնաւորապէս, կոլտոգացման մէջ թոյլատրւած սխալները:

Հաստատում է նաև ներկուսակազմիկան գաղտուքն ու խմբապետական թափաշարակութիւնը: «Անդրկովկասեան կազմակերպութիւնների երրորդ ախար, ասում է նա, խմբապետութիւնն է, որ պղծիչներ են առաջ քաշում ոչ իրենց գործնական, սկզբունքային յատեցութիւններով, այլ այն յախով, թէ որի՞ մարզն է, ո՞ւմ է ըէ՛ ասլիս, որի՞ հետ գինի է խմում, ո՞ւմ աստի է կրնում»:

Գալով-Ագրբէջանի Կոմկուսին և, մասնաւորապէս, Բագուի կազմակերպութեան, Պրոնսկիին նորից ու նորից հաստատում է, որ թափաշարակութիւնն ու ազգային հակամարտութիւնները ոչ միայն չեն վերջացել, այլ և տարէ տարի աճում են: Յայտնի է, որ 1930թ. օգոստոսին Մոսկուայի կազմակերպութեանը փոխել էր Բագուի «կուսակազմակերպութիւնը» Գիկալոյի դիւաւորութեանը, որովհետև այն օրերին «ուչ ծիայի խմբաւորումներն էին վերանորոգել, այլ և թափաշարակայան անսկզբունք պայքարը բարձրակին անթոյլատրելի ձեւեր էր

ընդունել»: «Գործուն տարրի բարձր խաւերում զարգացել էին բամբասանքներ, անսկզբունք թափաշարակութիւնը, միմեանց ուղի տակ հող փորելը»: Գիկալոյի զեկազմակերպեան յարցերը կազմի է շուտով ընկաւ զգաւաւորի կոմիտէին» ազդեցութեան տակ, «Ագրբէջանի և Բագուի կուսակազմակերպութեան մէջ նորից թափաշարական պայքար առաջ եկաւ»: Այս անգամ մի շարք թափաշարակ միացած՝ Բագու քերին զմեծապետական թէքումները, ՀամԵրայեցիցին «տեղական ազգայնականների» հետ: 1931թ. գարնան պէտք եղաւ այս կազմին էլ փոխել: Հիմա Բագուի «կուսակազմակերպութիւնը» կանգնած է զերգահանական գծի» տեսակէտի վրա («Զ. Վ.» 18 յուն.):

Ագրբէջանում իշխող մտայնութիւնների բնորոշման տեսակէտից կարեւոր է Ագրբէջանի Կոմկուսի երկրորդ քարտուղար Ալա-Սուլթանովի ճարք, որից իմանում ենք, որ 1931թ. առաջին կեսին Ագրբէջանի զեկազմ կոմունիստների մի մասը հակառակ էր, որ թուրքական զիւղերի ուղարկելու քաներական խմբերի մէջ կրնին և ուռններ. «Ե՛րբ մի շարք պատասխանատու կոմունիստներ չէին ուզում ամբացնել Բագուի բաներների կապն ու զեկազմակերպութիւնը ագրբէջանական զիւղի վրա»: Եւ այդ խնդրում նրանք ստացել են մուսաւաթականների աջակցութիւնը» բնորոշ է, որ Ագրբէջանի կենտրոնի և Բագուի Կոմիտէի դէմ մղւած կուտած թափաշարական աջակցութիւնն էին գանձում Մ. Բ. Մա-մէդ Չաղէի և Մամէդ Թաուու Չաղէի կողմից»:

Այնուամենայնիւ, զեկազմակերպութիւնը լուծելուց յետոյ, Մոսկւան հարկաւորած եղաւ որոշ զիւղումներ անել Ագրբէջանի ազգայնականներին: Ալա-Սուլթանովը պարձեւեղով յիշում է, որ նոր զեկազմակերպութիւնը «ուչ թէ խօսելով, այլ գործով միջոցներ է ձեռք առնում պատրաստելու 10 հազար նոր աշխատուարներ ընկի ապուրթիւններէց և՛ առանձնապէս, թուրք բաներներից», որի հետևանքով քարձորակալ աշխատուարների թուրքական մասը ուղ՛ հանրապետութեան մէջ 33%ից բարձրացել է 50%ի, այսինքն՝ 1930թ. 1,648 թուրքերի փոխարէն 1931ին՝ 4,843 թուրք: Միջակարգ զարդեցներում սովորողների մէջ 1930թ. մենք ունէինք 6,105 թուրք, իսկ 1931ին՝ արդէն 12,768: Բանֆայեներում 1930թ. Պոլսոյում էր 376 թուրք, իսկ 1931ին թուրքերի թիւը հասաւ 3,066 հոգուր»:

Այս փաստը հաստատում է և Պրոնսկիին, որի հաշորդած տեսլներով 1930ին Բագուի կազմի մէջ ընդունւել է 26% թուրք, իսկ 1931ին՝ 27%: Արհեստակազմական բնիկների մէջ թուրքերը կազմում են 31,3%: Կուսակցական վարի մարտիների մէջ թուրքերն առաջ 25,6% էին, այժմ՝ 27,2%, հայերը առաջ 24%, այժմ՝ 25%: Այս բոլորով հանդերձ, նոյն Պրոնսկիի ճառից իմանում ենք, որ թափաշարական հակամարտութիւնները Բագուն շարունակում են և որ կուսակցութեան մէջ կան բարձր զիւղ ունեցող մարդիկ, որոնք ասում են, թէ «Ստալինը երկիրը տանում է դէպի կործանում»: Բնականաբար, նման մարդկանց դէմ մեք են անուած համապատասխան միջոցներ: («Զ. Վ.» 20 յուն.):

Անցնելով Անդրկովկասի կեսերի միւս երևոյթներին՝ ամենից առաջ պէտք է կանգ առնելք «Նշգրտեակի երրորդ վճռական սարաւայ» ծրագրի իրականացման և հետագայ հեռանկարների վրա: Այս տեսակէտից առաջին հերթին անհրաժեշտ է արձանագրել Առաքը, որը, ինչպէս յայտնի է, Անդրկովկասի դիւաւոր հարստութիւնն է և հանդիսանում է Մորհրդ. Միութեան անտեսութեան հիւժեքից մէկը: 1931 թւին խորը ճեղքածքներ եղան և նախարարականութեան մէջ: Ծրագրով որոշւած էր հանել 15,2 միլիոն տոն, հանւած է 13,5 միլիոն — 88,6%: Պրտի փորւէր 663,000 մետր, փորւած է 447,000 — ծրագրի 67,4% է («Զ. Վ.» 3 յուն.): Այսպիսով, «Նշգրտեակի երրորդ վճռական տարում», խորհրդային տնտեսութեան զհանգուցային» մէկ ձեւը, դուրս է գալիս ծրագրի լուրջ թեքակատարումով:

Միտ գլխաւոր հարստութիւնն է բամբակը, որի 1931 թիւ ծրագիրը վիժեւ է, ճամնեակայտառակ կերպով: Առ 10 յուն. ամբողջ Անդրկովկասում հաւաքել է ընդամենը 128,126 տոն բամբակ, որից Արքրէջանում՝ 109,897տ., Հայաստանում՝ 10,488տ., Վրաստանում՝ 7,741տ.: Մեծ քանակութեամբ բամբակ մնացել էր դաշտերում չհաւաքւած: Միայն Արքրէջանի սովխոզներում դաշտում մնացել է 17,000 ցննաներ բամբակ:

1932ին Անդրկովկասում որոշւած է ցանել 291,100 հեկտար բամբակ, որից Արքրէջանում՝ 233,000հ., Հայաստանում՝ 30,100 և Վրաստանում՝ 28,000հ.:

Եւսոխորշւած է և բերքի քանակը. ջրովի հողերը պէտք է տան մէկ հեկտարին, միջին հաշւով, 7,92 ցննաներ: Ըստ հանրապետութիւնների բերքատուութիւնը ներկայացնելու է հետեւեակ պատկերը. Արքրէջանում մի հեկտարից՝ 7,82 ցննաներ, Վրաստանում՝ 7,3 ց. և Հայաստանում՝ 9,3ց.: Սրով, ուրեմն, Անդրկովկասի 1932թ. ամբողջ բերքը լինելու է 231,748 տոն, որից Արքրէջանում՝ 183,328 տ., Հայաստանում՝ 27,920տ. և Վրաստանում՝ 20,500տ.: (Ձ. Վ. » 11 յուն.):

Նկատելով, որ Անդրկովկասի արտադրած բամբակի 60%ը ընկնում է Արքրէջանի վրա, Մոսկայում որոշւել է Ձախկոյովումը, այսինքն՝ Բամբակի կենտրոնական Վարչութիւնը և նրա թրջւտները տեղափոխել Բազու: 400,600 յուրքի է յառկացւած Բազուում տեղափոխելիք հաստատութիւնների համար շէնքեր կառուցանելու նպատակով: Թիֆլիսում և Երեւանում պիտի կազմակերպվին Ձախկոյովումի վրացական և հայկական բաժանմունքներ:

Նախկին ու բամբակից յետոյ, ամենահարուստ խնդիրը գիւղի կոլխոզացւումն է: Համ. Կոմկուսի Անդրկովկասի իր 29 դեկտ. որոշումով Հաստատում է, որ Անդրկովկասի շրջաւոր ու միջնակ դիւղացիական տնտեսութիւնների 40%ը, իսկ բամբակացան ըրջանների 58 տոկոսը մտցւած է հաւաքական տնտեսութիւնների մէջ: Բայց այս քանակական յաջողութիւնը մոայլում է ուրիշ անկումով. գիւղատնտեսութեան արտադրութիւնը փոխանակ անելու պահանջ է: Անդրկովկաս արձանագրում է բաղաժախէ Թերտութիւններ կոլխոզչինարարութեան մէջ: Այսպէս, «Անդրկովկասեան կուակազմակերպութիւնների գործած կարգու բազաբական սխալները 1930թ. գարնանը հաւաքականացման խնդրում մինչև վերջ չուղեւորէ: Երկրի հին կուակացական զեկալարութիւնը հաշի չի առել չին դասերը և նոր յուրը սխալներ է արել դիւղացիական հարցում»: «Քոնհիկ շեղումներ են կատարուել և գիւղատնտեսական միջրքների (հայ, մի, խաղով, բոժոժ) հաւաքման ժամանակ Հայաստանում, Արքրէջանում և, մանաւանդ, Վրաստանում»: Գործւած սխալների հետեւանք է եղել «Կոլխոզների զբաւած ցանքերի տարածութեան ցած տոկոսը (40% հաւաքականացւած ազգատ ու միջնակ գիւղացիական տնտեսութիւնները զբաւել են ամբողջ ցանքի 30%ը միայն): «Ցած է արտադրութեան միջոցների հաւաքականացման տոկոսը (ամբողջ Անդրկովկասում հաւաքականացւած է լծկանների 26%ը և հաստեթարքեր տաւարի 7%ը): «Կոլխոզների ցանգաւածային հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ Անդրկովկասում կոլխոզները հազի 20-25%ը միայն աշխատանքի ուղիղ հաւաքում, արտադրութեան շափեր և աշխատանքի գնահատութիւն ունին: «Կուակացական, խորհրդային և կոլխոզական կազմակերպութիւնները դեռ չեն մեծոտարկել գործած կարգի լոյսման»:

Եւ Անդրկովկաս բամբակի օրինակներով ու փաստերով հաստատում է կատարւած գանցատութիւններն ու թաղաքական սխալները, որից յետոյ գծում է 1932 թիւ կոլխոզական շինարարութեան ծրագիրը: Հիմնական նպատակն է՝ շրտոր ու միջնակ տնտեսութիւնների 50-55%ը մտցնել կոլխոզների մէջ և բամբակացան շր-

ջանների բոլոր տնտեսութիւնները հաւաքականացնել. ուղղել անցեալի սխալները և բաժնրացնելով զգալափարական-քաղաքական ցած մակարդակը և քանգալափարական կուակացական թոյլ աշխատանքը՝ ճամբացնել գիւղի կուակացական ու կոմերիտական ըրջանները» (Ձ. Վ. » 3 յուն.):

Ձի իրականացւած և մետաքաղործութեան ծրագիրը. գարնան, քրոժոժի ծրագիրը գործարարւած է ամբողջ Անդրկովկասի համար 44,5%ով, իսկ Արքրէջանում՝ 40,8%, Վրաստանում՝ 46,1%, Հայաստանում՝ 59,2%: Մասնաւորապէս մեծ ճեղքւածքներ եղան Երկրորդ կիւսմեակին. Գաշնի ծրագիրը բոլորովին չի-իրականացաւ Հայաստանում ու Արքրէջանում, իսկ Վրաստանում՝ միայն 14%ով: 1932 թիւ համար որոշւած է՝ գարնանը սնուցանել 203 հազար տուփ, որից 100,000ը Վրաստանում, 100,000ը Արքրէջանում և երեք հազարը Հայաստանում: Այլ և որոշւած է սնել 10,400 հեկտար թոթի, որից Արքրէջանում՝ 4,500, Վրաստանում՝ 6000, և Հայաստանում՝ 600 հեկտար: Հիմնել 5 մեքենայացւած որդնարաններ, որից 3ը Վրաստանում և 2ը Արքրէջանում: Մետաքալ մշակութեան տեսակէտից էլ Հայաստանին արճամարճեի տեղ է տրւած, չնայած որ Հայաստանի մետաքար համարում է լաւագոյնը թէ որակի և թէ, մանաւանդ, քանակի տեսակէտից:

Նայն է վիճակը և սննդեղէնի արտադրութեան: Անդրկովկասի ալիւրի գործարաններն ու ջաղացները, ըստ ծրագրի, պիտի տալին 116,000 տոն ալիւր. տեւել են 120,000 տոն: Բայց ձաւարի և բրնձի արտադրութիւնը յետ է մնացել ծրագրից: Պահածոներ պիտի պատրաստուէր 37,250,000 տուփ, պատրաստուել է միայն 25,400,000: Մի ծրագրի 66,7% և ձկնորսութեան 90% է իրականացւած: Պողեղէնն ու բանջարեղէնը պատրաստւած է 83%ով, անուշեղէնը՝ 52%ով: Միայն տոթի ծրագրի 83,3% է յաւորւած:

Յաջորդ տարւայ ընթացքում որոշւած է պատրաստել 12.000 տոն ձէթ, 22,000 տոն սալոր, 48 միլիոն տուփ պահածոյ, 11,600 տոն պուռլ ու բանջար:

Որոշւած է սննդեղէնի արդիւնաբերութեան վրա, 1932ին, ծախսել 55 միլիոն ուրլի, որից առաջին հերթին Թիֆլիսում չինելու է 4 միլիոն ուրլը արժէքով ալիւրի և հացի կոմբինատ, աւարուելու է Թիֆլիսի մարզաբնի գործարանը (1,500,000ր.), գործի է դրուելու Վրաստանի շաքար գործարանը (8 միլիոն ուրլի), չինելու է պահածոյի գործարան Քութայիսում և Լէննորանում, մոի գործարան Բազուում (10 միլիոն ուրլի) և Լենինականում (3 միլիոն ուրլի), ընդարճ-ձակելու են Թիֆլիսի և Բազուի օստցարանները, չինելու են անուշեղէնի գործարաններ Թիֆլիսում, Բազուում և Երեւանում (800,000ր.), վերականգնելու են Գանձակի և Երեւանի ձէթի գործարանները (1,500,000 ուրլի) (Ձ. Վ. » 4 յուն.):

ՀԱՅԱՍՏԱՆ

Փողովների ամիս՝ և Հայաստանում: Ամէն գործ մէկ կողմ դրած՝ բուլեհիկները ժողովներով են գրաււած: Յուն. 17ին, Երեւանում, քաղեց Հայկովկասի Ցրդ համադումարը, իսկ մինչ այդ տեղի ունեցան շրջանային ու քաղաքային խորհրդատոյովներ: Վերջիններից ամենահաւաքբարկանը Երեւանին էր, ուր ներկայացւած զեկուցումներից պարզեց, որ քաղաքի տնտեսութիւնների մի մասը կատարել է իր ծրագիրը, միւս մասը՝ ոչ: Որակի տեսակէտից տնտեսութիւնը եղել է «չատ թոյլ», մասնաւորապէս շինարարութեան գործը: Երեւանի զաղկոժի զարտուար Գ. Պետրոսեանը վկայեց, թէ՛ «Շինարարութեան բոլոր սպա-

ները տուժում են: Ու խնդրում են Գէպէտի միջա-
մտութիւնը: «Ջարեա Վաստոկա»յի խմբագրութիւնը
չտասպ հեռագրիներ է քաշում Մոսկւա, Հարկրակցու-
թեան ժողովուն — կորած պարանքները դեռ չեն դրո-
ւել:»

«Այսպիսի բաներ պատահել են և Մազնիտսորոյի»
և ուրիշների հետ, միխթարում է իրեն «Ջարեա Վաս-
տոկա»ն: «Մի ամիս առաջ Լենինգրադից մի վազոն
ստբաւորում էր ուղարկել Զորագէտի համար: Վա-
զոնի վրա սեւով սպիտակին գրած էր՝ «Քալպաբան
կայանի. Զորագէտ»: Ապրանքը Զորագէտ չհասաւ,
բայց կայարանի պետը ստացաւ մի հեռագիր, որով
Վլատիկալակի կայարանապետը Հաղորդում էր.—
«Զորագէտի պարանքը մեզ մօտ է: Կարգադրեցէ՛ք ի՞նչ
անենք»: Զորագէտից պատասխանեցին, որ պարանքն
չտասպով ուղարկեն Բալազէրան, բայց վազոնը մինչև
այժմ չկայ:»

Այսպիսի դէպք էլ է պատահել. № 1 տուրքերը տեղ
հասաւ առանց բոլորերի (պտուտակաւոր մեխեր): Շատ
ժամանակ անցած Իվանո-Վոզնեսենկից հեռագիրը ըս-
տացւեց, թէ՛

— Զեր բոլորը մեզ մօտ են. Հաղորդեցէ՛ք ի՞նչ
անենք»:

Լենինգրադից Զորագէտի համար ուղարկած ապ-
րանքը դնացել է Իվանո-Վոզնեսենկի, բոլորովին հա-
կառակ կողով:

Մրան ասում են խորհրդային շինարարութիւն,
կամ, աւելի ճիշտ, «սոցիալիզմի կառուցում»:

Մի ուրիշ դարձալի պատմութիւն էլ Կոմկուսի
ներքին բարեբեքից.

Երջի «Ջարեա Վաստոկա»յի 5 յուն. համարում
կարդում ենք Երեւանից քաշած հետեւալ հեռագիրը.
«Նորերս յոյս տեսած ձեր Ուղի» ամսագրում գետեղ-
ւած է «Իմպէրիալիզմի Համաշխարհային Տօգնապը»
Հակալենինեան յօդուածը: Հեղինակը — Պայեան —
մենչեւիկեան սեռակէտներ է առաջ քաշում սոցիալիզ-
մի կառուցման խնդիրները և իմպերիալիզմի ներկայ
աստիճանի մասին՝ վերաքննելով Լենինին ու Ստալին-
ին: Հայաստանի Կոմ. Կուսակցութեան Կենտկոմի
քարտուղարութեան թիւրօն հանած որոշումով համա-
րում է Պայեանի յօդուածի տպագրութիւնը ազգազակոզ
մի օրինակ փոսած ազատականութեան համար խիստ յան-
դիմանութիւն է արւած: Խմբագրութեան առաջարկւած
է վերակազմել աշխատանքը ընդ. Ստալինի պատմական
նամակի ցուցմունքները Հիման վրա և բանալով ինք-
նաքննապատմութիւն՝ մերկացնել ամսագրում թույլ
արւած կոպիտ քաղաքական սխալները (Պայեանի յօդ-

ւածը, մի շարք սխալներ Ա. Բիցնուսի յօդուածում և ու-
րիշները), ուժեղացնել ամսագրի քաղաքական-ստե-
սական բաժինը: Խմբագիր Միխ Զուբարը արձակու-
մէ պաշտօնից: Խմբագրական մարմնի կազմը վերանու-
որդւած է: Խմբագիր է նշանակւած Դրաստամատ Սի-
մոնեանը: «Պատաստի կրակի փոսած ազատականու-
թեան վրա», հրամայում է Անդրերկրում պաշտօնաթիւր-
թիւր:

Նոյնպիսի ահագնազ և «խոստադոյն կրակ» բաց է
արել և «Պորհրդ. Հայաստան»ը: Շանթարտո յօդ-
ուածներ, սպառնալիքներ, բանադրանք ու պատիժ,
ինքնախարազանում: Սեղծ Ա. Բիցնուսին այնքան է
սարսափել, որ մի երկարապատում յօդուածով «Նա-
ցիոնալ սուրբուհի»ի և փոսած լիբերալիզմի», այս-
ինքն՝ Ս. Սանտիանի և Ա. Կարինեանի դէմ, ի միջի
այլոց, գրում է իր մասին. «Հարկաւոր է նշել նաեւ
սոցիալիստ հեղինակի կոպիտ սխալները, որոնք արտա-
յայտել են «Հայկական Սինկալեիականութիւն»ը յօդ-
ւածում (տես «Նոր Ուղի», գիրք 3րդ)» և ծունկի է
գալիս Կոմկուսի առջև. («Պ. Հ.», 9 յուն.):

Հաւատաքննական միջոցներ են ձեռք առնւած
ուրիշ կոմունիստների դէմ: Ի միջի այլոց, խիստ դա-
ւապարտութեան է ենթարկւած թեթեւալիւս Վ. Թո-
թովինցը իր «Հայ ազգի փրկիչ Դաշակները» պարսա-
ւագրի համար: Հայաստանի Պորհրդ. Գրողների Ֆե-
դերացիան նոյն իսկ առանձին բանաձև է հանել Թոթո-
վինցի այդ շարագրութեան մասին. («Պ. Հ.», 1 յուն.):

Փակենք մեր տեսութիւնը մի վերջին դարձալի-
րով. «Պորհրդ. Հայաստան»ը իր 9 յունւար թիւ առա-
ջին էջի վրա արտատղել է Աթէնքի «Նոր Շարժում»
թերթի մէկ յօդուած Դ. Շահվերդեանի մահափորձի
առասպելի մասին՝ այսպիսի վերնագրով. «Բաշնակնե-
ր փորձում են տեսարով վիճեցնել ներգաղթը», «Մա-
ուզէրիստների ծրագրած տեսութեան կանաչ ալտը Պոր-
հրդային Հայաստանի ներկայացուցչի դէմ»: Ու մի
առանձին խմբագրականով էլ կրկնում ու հաստատում
է «Նոր-շարժում»ականների յիմարութիւնները: «Առա-
ջին անգամը չէ, գրում է Երեւանի պաշտօնաթիւրթը,
որ դաշնակցական մտուզէրը դուրս է գալիս ահաբեկե-
լու Պորհրդ. Հայաստանի և Միութեան պաշտպանու-
թեան դիրքերում համոզկեր կանգնած հայ աշխատա-
ւորին՝ Ամերիկայում, Ֆրանսիայում, Միջուսում,
Քալիֆոռնիայում»: «Բաշնակցականները չէին կարող
չկրակել Ֆիլիստիալիզմի կողմէն», որովհետեւ նրանց
նպատակն է «վիճեցնել ներգաղթը»:

Ի՞նչ առև այդ երանելիներին՝ խնդա՞ս, արգահա-
տես: Չեն էլ մոտձում, որ այսպիսի յիմարապատում
ստերով միայն իրենց են ծիծաղելի դարձնում. ծիծա-
ղելի իրենց բոլոր Շահվերդեաններով ու «Նոր Շար-
ժում»ներով...

Հայաստան.

ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ*)

Չորս տարի է անցել այն օրից, երբ ես պոզիւցի
Հայրենի աշխարհից ու բուն ուժով քշուցի Հիւսիսային
աքորապալարերը:

Չորս ձի՞ք ու երկար տարիներ: Ի՛լ բանասային տան-

*) Այս գրածը ուղարկել է մեզ ծանօթ մի անձ,
որ, իբրև փախուսական, ապրել է Հայաստանի լեռ-
նալան և գրել անմիջական տպաւորութիւնների տակ:
ԽՍՀՄ.

չանք չմնաց որ չկրէի: Վերաւորանք ու զուլում չեղաւ
որ ճանաչէի: Դառնութեան բաժակը քամեցի մինչև
Վերջին կաթիլը:

Բոլշեւիկեան աքորը վերջ չունի: Բանտերն ու դըր-
գանները համայնաւոր են: Մահ է թագաւորում այն-
տեղ ամէն կողմ: Մեռուում է ոչ միայն մարմինը, այլ
և հոգին, միտքը, գազացունքը:

Ու ես չկարողացայ դիմաւոր աքորապալարի մա-
հաւունչ կեանքին: Եւ ահա ձեզ հետ եմ, Հայրենի լեռ-

A.R.A.R. @ digitised by

ներ, ձեր անյոյ ծոցում, դաժան Ձեկայի հեղաջ աչքից հեռու, ազատ երկնքի տակ:

Եւ մէկիկ մէկիկ շրջում եմ ձեր լանջերն ու ձորերը, ձեր շնչի տակ:

Ողջունում եմ ձեզ որդիական կարօտով ու դուր-գուրանքով: Գո՛ւ, Թանկագին Պուստուկ, Մայր Դա- փանի հայրորդ ու անյողողիկ հեկայ: Անձուրթեամբ ու կարօտով նայում եմ սպիտակ գագաթներ, կանաչ, ծաղ- կաւէտ կրճերդ, արագահաս ու շինջ աղբիւրներդ: Ինչքա՛ն սիրուն ես, որքան հարազատ:

Եւ դուք, քաղցր Թուփամորիք, Սոփի Դարա, Մալ Գաղիկ, Գոլջիկ և Զրանդ:

Պարկում եմ Սախկաւ Սուրի սպիերին, խիտ սքօտի ու բիրաւոր ծաղկների մէջ: Հտոր աշխարհ է բունել: Գոյների խաղ աչքերիս առջև: Ու արեքցած բուրբոն- քից՝ հուճեքս սեղմում եմ մայր հողին: Ինչքա՛ն լաւ է, ա՛յ, որքան համեկի:

Եւ գանդաղ բարձրանում եմ վեր, Գուգ-Գուլ: Նա- յում եմ նրա վճիռ ու կապուտակ, արահուգ պէս պարզ ու գուլալ, կէտ-ստոցապատ կախարդական շրին:

Եւ սար ու դարով, մտամոլոր դիմում եմ Հագա- րամէջընդի մշտառտախուզ կատարին: Ի՛նչ երջանկու- թիւն. ամպեր չկան ու գագաթը բաց՝ խորխո նայում է իր շուրջը:

Ոչինչ չէ փոխած մայր բնութեան մէջ: Նոյնն է երկնքը: Նոյնն են լեռները, նոյնն են ձորերը, Ժա- յուներն ու ծառերը: Ամէն ի՛նչ նոյնն է: Միայն փոխած են մարդիկ ու կեանքը:

Նայում եմ շուրջս՝ դէպի արեւելք, դէպի արեւ- մուտք, հարաւ ու հիւսիս: Ահա Օրդուրաթին իր շրջա- կայքով՝ Կոսր մուշի սաւանդով ծածկւած: Գողթա՛նք ահա, աւերակ ու մուշը: Ազուրիսի երբեմն չէն տների պտուերն ու սիւները աւերակ: Ո՛չ շուռ, ո՛չ ձայն այն- սեղից: Մեռելութիւն ամենուրեք: Մուխ չկայ, չկայ կենդանութիւն: Թիւրքի ոտքն է կոխել այդ դժբախտ երկիրը:

Լուս է ամէն կողմ: Մեռել է երգը: Ձի հնչում այլ- ևս դաշտի հողովելը: Ինչ որ փոթորիկ ու աւեր է ան- ցել, տակն ու վրա արել ամէն ինչ:

Ի՛նչ է պատահել ձեզ, սիրելի Հայրենակիցներ:

Գաղտնի ու աննշար շրջում եմ բոլոր գեղերը,

մտնում տները, տեսնում մարդկանց հետ: Մանօթա- նում անք ու դարձերն: Ամէն ինչ փոխել է: Ո՛չ նախ- կին ու բարխութիւնը կայ, ո՛չ երուն կեանքը: Չի լաւում երաժշտութեան ձայն:

Ամենքը սքաւորի նման են: Լուռ անցնում են ուր- ականի պէս՝ անշուշտ, անճար: Մի ինչ որ ուժեղ ձեռք հարածում է նրանց:

Այլզ գիղացրո չէն հիւրընկալութիւնը: Տխուր ու քաղցած՝ ամենքը աշխատում են օրն ի օրն: Աշխա- տանքը վերջ չունի, իսկ արդիւնքը տարւում-յեցում է կառավարութեան անյատակ ամբարները: Գիւղացուն ոչինչ չի մնում: Գիւղը պարապ է: Ամենքը՝ թշւառ, ցաւատանջ...

Ու ծանր տեսիլքից՝ ճնշած, սրտաբեկ, վերստին ձեզ եմ ապահւնում, հարազատ լեռներ, դո՛ւք, Զան- գեղուրի, Դախան-Գենեաղի արթուն պահակներ, դուք, Հայ Ժողովրդի գծախոտ օրերի սպիտանքն ու յուրը:

Կար ժամանակ, երբ ձեր սիրատուն լանջերը թըն- դում էին աշխատանքն ու երգի կենարար հնչիւններով: Ձեր գաւակները — կուշ ու բարի, աշխատուող գան- գեղուրցիք — էրևեց զբոնելով ողորում, չէնացնում էին այս երկիրը, օրհնում կենանքը և արեւը: Իսկ հի՞մա՞ — աւեր, ամայութիւն, սո՛վ, լաց, բանտ ու քարոտ: Չեկա՞...

Թոյլ տէ՛ք, ձեր անարտու ծոցում մտռանա՞մ դա- ժանութիւնը մարդու, Թողէ՛ք՝ հանգստանա՞մ ու մտա- ծեծ երկա՛ր, շատ ու շատ երկար: Մտածե՛մ աշխարհի անիրաւութեան մասին:

Մտածե՛մ բոլոր այն ընկերների մասին, որ արժո- րական հիւսիսի սառցապաշտերով՝ երազում են հարա- տի շերմ արեւը և ստապարմ Հայրենիքի կարօտից:

Մտածե՛մ բոլոր այն ընկերների մասին, որոնք ան- կարող դիմանալու բունութեան անարգ լծին՝ Թողին տունը, ընտանիքը, Հայրենիքը և Թափառում են օտար վայրերում, տարազրութեան մէջ՝ մի օր կուշա, մի օր անօթի, ձեր կարօտը սրտնորում:

Մտածե՛մ, մտածե՛ք միասին՝ ձեր բարի ու սրբար Ժողովրդի մասին, որ ազատութիւն ու լոյս է տեսնում և հեծում է բարբարոսների մարակի տակ...

ԳՈՒՐԳԷՆ

ԼՈՐԻՆՍ, ԴԵՂԵՐԴԻՆԳ ԵՒ ԴԱՇԵԱԿՆԵՐԸ

Մտակայի կնոստոմոսկայա Պրաւագ» Թերթի յա- տուկ թղթակից Ա. Փոմր ճամբորդութիւն է կատարել Զանգեզուրում և 11 թղթակցութիւն է հրատարակել «Զանգեզուրը վրասնում» վերնագրով: Վերջին թղթակց- ցութեան մէջ նա ընդարձակօրէն յատուկ է Զանգեզու- րի 1930 թեականի ապստամբութեան մասին:

Հետաքրքրական է, թէ բուլշևիկներն ի՛նչ ձեռով են ներկայացնում այդ ապստամբութիւնը: Խորհրդային իշխանութեան գործած աւերը, Չեկայի վայրագութիւն- ները, կոլխոզն ու կուլակաթափութիւնն, ի հարկէ, տեղ չունեն նրանց բացատրութիւնների մէջ: Ապստամ- բութեան միակ հեղինակը անգլիական դիմապետ Լո- րէնսն է, իսկ գործարարը, ինչ խօսք, Հ. Յ. Դաշ- նակցութիւնը:

Ուրիշ կերպ ինչպէ՞ս կարող է լինել. չէ՞ որ «Զան- գեզուրի սարահարթը Արբրէջանի բանակին է: Եւ այդ բանակին ու՞մ ձեռքին որ գտնուի, նա էլ կը տիրէ Բա- գուրն»:

Անգլիան այդ շատ լաւ գիտէ: Անգլիական դրա- մատիրութեան «հաւատարիմ չուն» գնդապետ Լորէնսը արթուն է: Նա ոտքի ճանեք Աղայանանում Բաչէ- Սակօին ընդդէմ Ամանուլլա-խանի: Նա խտանց միջին Ասիան: Շարժման մէջ գրեց բաժանչներին: Հիմա էլ

այդ զգիշտուիչ գաղանջը դաշնակներին ու քերդերին է գրգռում «Մեծ Հայ-Գրդական պետութիւն» ստեղծե- լու խաճով, բայց «Մեծ Հայ-Գրդական պետութեան ազգապարզ նպատակ չէ, այլ միայն միջուց, որը ան- գլիական դրամադրիսին հնարատրութիւն պիտի տայ մի յարմար վայրկեանին ոտտիկ գործել» գրաւելու հա- մար Բազմի նախնիքը:

Ու բուլշևիկ թղթակիցը գառանցում է. «Ճեւ ահա անցեալ տարի, այնպէս մուժթ գիշերներին, այնտեղ, ուր խուովայրոյ Արաքսն է հոսում մեր Հարաւային սահ- մաններին, նստած օդով լցւած տեղերի վրա, միւս ա- փեց դէպի խորհրդային երկիրն սկսեցին անցնել դաշ- նակները: Նոյն այդ տեղերի վրա փոխադրեցին և գէն- քեր ու փամփուշտներ:

«Շատ էր, երևի, տրւած ոսկին, որ մարդիկ ար- համարհելով դեպի կատարութիւնն ու սահմանադա- րօքերի արթութիւնը՝ խիզախեցին նման քայլի: Ա- րաքսի վարի մասերում ապրողներն ատու՞ էին, թէ այն օրերը ժամեր էին լինում, որ գաշնակների դիակ- ները գետու՞մ լողում էին մեծ ատատութեամբ:

«Բայց մուժթ է գիշերը Արաքսի վրա և աղվկոտ, խիտ աղակոտ է գեար, և շատերը հասան մեր կողմե- րը: Երևի, Ի՛չ տերղինդը և նախալին միւս ջղջերը շատ

առատաձեռն էին այն օրերին և ժլատ չէին շեկեր ստորագրելու: Անկախած, Լորէնսը անօրինակ մեծ միջոցներ ունէր, որովհետև դաշնակ խմբեր խորհրդային սահմաններն ուղարկելով հանդերձ զնորապետը ասպատակութիւն է հանում և Թիւրքիայի զբերդերի մէջ:

Ճորձերը բացատրիկ կերպով մեծ խաղ է սկսում: Չի կարելի ուրանալ որա խոշոր ռազմազորական ընդունակութիւնները: Արիւմտականութեան սկիզբը նա կատարում է մեր երկրագործութեան հաւաքականացման, կուլակութեան դէմ մղւած կուրի ամենաբարձր վայրկեանի հետ: Գնդապետը ենթադրում էր, որ ներս թողնւած խմբերի կորիզները արագօրէն կհանն դժգոհներով և մեծ խմբեր կը դառնան: Սահմանապահ փոքրաթիւ զորամասերը մինչև ուշեք դան, կը ճզմէին զբերդերի ու դաշնակների կողմից:

Այսպէս, Լորէնս-զերիւր-դաշնակ գործակցութեան փաստը հաստատուց յետոյ, հիմնովին կենտրոնական թերթեր ներկայացնում է և այն պահանջները, որ առաջադրում էր Լորէնսի գործակալ Դաշնակցութիւնը. «Արդ՛ ի՞նչ էին ուզում դաշնակները...»

«Մենք բարձրագրել ենք ասպատակութեան դրոշակը. մենք կուուում ենք Մեծ Գիւրը-Հայկական պետութեան համար:

«Նա կը տարածուի ծովից ծով: Կասպիականից մինչև Տրապիզոն...»

«Մենք Քաղատենը ձեզ բռնելիկներէց:

«Ձեր աները կը լինեն ձե՛ր աները. դուք կը խմէք ձե՛ր գոմէշի կաթը և, բացի իր տիրոջից, ոչ ոք չի կարող թամբել ձին: Թէ հարուստը և թէ աղքատը հաւատարապէս աչք կը լինին իրենց ունեցւած քին»:

Ի հարկէ, դաշնակների այս խոստումներին Չանդեղերում ոչ ոք չի հաստատել: Մանաւանդ երիտասարդութիւնը «Կուսակցական-կոմունիստական կազմակերպութիւնները ու դիւրացիների մեծ մասը գէշերի դիմեցին: Ոմբերն ու պահակները քանցքի բոլոր ճամբաներն ու կամանները: Գազարը հէնց առաջին վայրկեանից ընկաւ թակարդը: Նա կուեց յուսահատօրէն, ինչպէս կուուում է դիւտաիչ գազարը, և ծանր հարածներ էլ էր յաջողում հասցնել: Այժմ, երբ դուք անցնում էք Չանդեղերի հարաւից, ամէն մի դիւրորհրդում, զբոյրի իւրաքանչիւր կարմիր անկիւնում հանդիպում էք սգաւոր շրջանակների մէջ դրած պատկերներ: Մեծ մասամբ, սպակիների յետեւից տեսնում էք երիտասարդ դէմքեր: Ձեզ չեն ասում, թէ դրանք զոհերն են անդլիական աշխարհակալութեան պահուածքան, որ մարդն ընկել է Որորդային Հայաստանը դաշնակներից պաշտպանելու, այլ պարզապէս պատասխանում են:

— Մեր տղան է: Սպանուած է անցեալ տարւակ կուուում աւաղակների դէմ:

Թշնամիներին նոյն իսկ դաշնակ անուրը չեն ուզում տալ: Գուցէ մի ժամանակ եղել է «կուսակցութիւն», իսկ այժմ սոսկական աւաղակներ են պատրաստ ամէն արկածախնդրութեան լաւ վարձարութեան համար...»

Մենք դիտմամբ առաջ բերելը այսքան հաւատներ՝ ցոյց տալու համար թէ բռնկեալ մամուլը ի՞նչ ժանդոսած գէնքերով է պայքարում Դաշնակցութեան դէմ: Կարիք կա՞յ հերքումների: Երեխան անգա՞ կը ինչպէս նման զնդարանութիւնների վրա: Լորէնս, Մեծ Հայ-Քրդական պետութիւն, Դեմէրիդնոյ, անդլիական սովի — մի՞թէ, իրօք, այդքան յիմար են բռնկեալ թրջ թակիցները. թէ՞ ուրիշներն են յիմարի տեղ դնում...»

Վ.Ա.ՍՊՈՒՐԱԿԱՆԻ. ՎԻՃԱԿԸ

Անցեալ անգամ տւիճի ֆանի մը լուրեր վասպուրակացի գաւառները այցելած վրասախի ակամատի մը ըրած հաղորդագրութեան: Նայմ աքիբէն կը փառնէ մեծ հետեւեալ տեղեկութիւնները.—

«Ժողովուրդի սպրեկակերպը, կենցաղը անցեալին նման է դրեթէ: Գաւառական կեդրոններու մօտիկ նկատելի է մասնակի փոփոխութիւն, զիսարկ և այլն: Կառավարութեան ոյժն ու հեղինակութիւնը կը զգացուի ամէն տեղ, շնորհիւ խտտադոյն ռեժիմի, վճռականութեան, անխնայ և աններող պատժի: Անազորոյն և ընտանջող դէպի ամէն մի հակապետական ջաչ: Այդ է պատճառը, որ լեռնային խուլ գաւառներում մէջ, ուր թիւրքի հոտ իսկ չկայ, մի-երկու պետական պաշտօնեայ, 8-10 ռուսական զինուորներ, կը պահեն կարգը: Հայերու աշխատանքը զբոյրներու հետ ամենէն աւելի կը կատարեն թիւրքը, որ բնագօրէն կը զգայ հայ-զերդական գործակցութեան իրեն հասնելիք մտանգը:

Կառավարութիւնը առաջակային դէպքերու համար այնքան մասնազ չէ, որքան թաղաքական կամ հակապետական բռնոյթ կրող գործերու և շարժումներու համար: Այսպէս, դէպի զբոյրներու մէջ պատահած աւաղակութիւնները, թալանն ու սպանութիւնը կամ առևտրական կարասաններու վրա եղած յարձակումները որժժան չէ, բայց զբոյրներու մէջ կատարւած թաղաքական աշխատանքներու վերաբերմամբ խիստ անողոք է:

Կառավարութիւնը ուղարկութիւն կը դարձնէ ճա-

նապարհներու և հաղորդակցութեան վրա. կամուրջներ կը շինէ ու կը նորոգէ: Քրիտիկը զբոյրերէն իտմբերով կը տանէ տարապարհակ աշխատանքի, առանց, ի հարկէ, որն է վճարումի: Նկատելի է օժտներու երթևեկութիւնը: Յաճախ կը հանդիպին օժտներ, որոնք Գուաչէն Կարճկանով կերթան Բիթլիս: Վանի մէջ կը պահուին ռազմական օդանավեր, որոնք ի հարկին հետախուզութիւններ կը կատարեն: Այդպիսի երեք օդանավեր մինչև Մոսկու ու Կարկառ թռիչք են կատարած ջրգական շրջանները հետախուզելու համար: Վանայ ծովի վրա առաջատանակեր չեն տեսնուի: Կերկին միայն ռուսերէ թողւած շոգեմակոյցներ: Հեռագրական և փոստային հաղորդակցութիւնը առաջայ նման է. կապ կայ միայն Շատախի կեդրոնի և Ոստանի հետ: Մոսկու, Կարկառ, հարաւային միւս գաւառներու մէջ հեռագրական դիմ չկայ: Փոստը պատահական է, այն ալ միայն պետական գործերու համար: Հեռախօսային դիմեր չկան:

Մեր վանքերէն վարազը քանդեր են. աւերակ է Չարահան Ս. Նշանի վանքը: Աղթամարը ամառադարձակ և ամայն է: Նարեկայ վանքը կիսով քանդւած է: Փութիւլու վանքը, Եղբրով լեռներու մէջ, զբոյրներու ձեռքն է և կը ծառայէ ճամբորդներուն իրեն ապաստարան: Եկեղեցիի չէնքի գմբէթի խաչը վերցւած է: Առհասարակ, ամէն կողմ կը տիրէ խեղճութիւն: Երկիրը՝ աւերակ ու ամայն: Ժողովուրդը, ուր որ կայ, թլւատ ու հարստահարւած: Երկկայ չէն ու կուշտ վասպուրականն է այս...»

Ի Ն Տ Ե Ր Ն Ա Ս Ի Ո Ն Է

ՄԱՐՏԻ ԺՈՂՈՎՆԵՐ — Ընկերվարական Աշխատաւորութեան Ինտերնախոնումը առաջիկայ Մարտ ամսին մի շարք կարեւոր ժողովներ պիտի կայացնի Բերնում (Չեխերիա), ինչպէս օրինակ՝ Գործադիր Կոմիտէի ժողովը, Զինաթափութեան Որհնագոյնը, որ պիտի կայանայ Արհեստակցական Ինտերնախոնայի մասնակցութեամբ, Ընկերվարական Կանանց Կոմիտէի ժողովը և այլն:

ԲԻՒՐՈՒ ՎԵՐՔԻՆ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ — Ինտերնախոնայի Բիւրօն ուժեղացրած կազմով նիստեր ունեցաւ Յունուար 24ին և 25ին Գեօրջում (Գերմանիա) միջադրացային քաղաքականութեան երկու հրատապ խնդիրների մասին արտայայտելու համար:

Մրանցից առաջինն էր սրտեղբարգական պարտքերի և հատուցումների խնդիրը, որ առանձնապէս սուր և նշանակալից էր առէլ զերմանական վարչապետ Բրիւնդի շուրջից յայտարարութեամբ՝ թէ Գերմանիան ո՛չ ներկայիս և ո՛չ էլ ապագային ո՛նէ վճարում չպէտք է անի պատերազմական հատուցումների հաշիւին:

Այս մասին Բիւրօն հետեւեալ բանաձեւն է հանում. «Վարկի միջազգային ճգնաժամը, դրամատիրական աշխարհի մէջ, գործադրութիւնը ծանրացնելու և աշխատակարծ վատթարացնելու հանգամանք ունի: Այս ճգնաժամը վերացնելու համար, անհրաժեշտ է ապագադրել համաշխարհային տնտեսութեան միջպետական պարտքերի ճնշումը, ամեն զննլ օրէցօր թարմացող մտաբերին և միջազգային գործակցութիւն հաստատուն դրամի կայունացումը վերականգնելու համար:

Նկատի ունենալով այս անհրաժեշտութիւնը Ը. Ա. Ինտերնախոնայի Բիւրօն յայտարարում է, որ—

1. Մինչև իսկ անմիջականօրէն շահագրգռած կառավարութիւնները ընդունուած են որ, իրերի ներկայ կացութեան մէջ, Գերմանիան անկարող է իրականացնել Իւնդի ծրագրով ստանձնած պարտականութիւնները: Միւս կողմից՝ Ամերիկայի Միացեալ Նահանգները պարտապանօրէնութիւնները կը դրեն դրամական անհանդուրժելի կացութեան մէջ, եթէ նրանք, առանց Գերմանիայից հատուցումներ ստանալու, Հարկադրեան շարունակել իրենց վճարումները Ամերիկայի Միացեալ Նահանգներին:

2. Ոսքը չի կարող լինել այն մասին որ ո՛չ մի պետութիւն իրաւունք ունի միակողմանի յայտարարութեամբ չեղեալ յայտարարել միջազգային դաշնագրերը, ինչպէս իօսքը չի կարող լինել (հատուցումներ ստանալու համար) ճնշումի կամ ըսնի ուժի գործելու մասին: Բուրձի գրաւումը ցոյց տուց այսպիսի քայլերի զգրախտ հետևանքները ամբողջ աշխարհի համար, և նրանց կրկնութեան դէմ Ինտերնախոնումը միասնաբար կը ծառայայ:

3. Զինաթափութեան, հատուցումների և պատերազմական պարտքերի հարցերը չառ սերտօրէն են շողկապած իրար Ֆինանսապէս և քաղաքականապէս, որպէսզի կարելի լինի նրանցից մէկն ու մէկը վերջնականապէս լուծել՝ առանց բոլորը միասին լուծելու:

4. Ը. Ա. Ինտերնախոնային յարած եւրոպական կուսակցութիւնները պէտք է առաջ տանեն իրենց ջանքերը՝ ճնշում բանցնելու իրենց կառավարութեան և խորհրդարանի վրա՝ որպէսզի Եւրոպայի պետութիւնները համաձայնութեան զան ընդհանուր ծրագրով տնտեսութեան վերականգնելու, վերջացնելու (մաքային) հովանաւորող քաղաքականութիւնը, գործակցելու

դրամի մշտական կայունացման համար և ջնջելու պատերազմական պարտքերը:

5. Այսպիսի լուծումների յանդէլու համար, անհրաժեշտ է, որ (Գերմանիայում և Ֆրանսայում) ընկերվարական կուսակցութիւնները, առաջիկայ ընտրութիւններից յազթանակով ելնեն, որպէսզի կարենան պատենչ կանգնել ազգայնական ալքերի դէմ Գերմանիայում և Գրաջպիսել ազգայնական յետադիմութիւնը Ֆրանսայում: Գերմանիայի և Ֆրանսայի համաձայնութիւնը, ինչպէս և Անգլիայի համեարախութիւնը ամենակարեւոր պայմանն է հանդիսանում վերացնելու համար ոչ միայն Համաշխարհային խաղաղութեան դէմ ծառայած սպանախնդիրները, այլ և միջազգային տնտեսութեան վերականգնումին ընդդիմացող արգելքները:

Երկրորդ հրատապ խնդիրը, որ դրած էր Բիւրօն առաջ՝ չին-ճապոնական ընդհարումէ: Այս մասին հանուած բանաձեւը հետեւեալն է—

«Ը. Ա. Ինտերնախոնայի Բիւրօն հաստատում է որ դրութիւն Մանչուրիայում գրախօրէն լրջացել է (Բիւրօն) վերջին բանաձեւից ի վեր, որով դատապարտում էր Մանչուրիայի մի կարեւոր մասի բռնագրաւումը ճապոնացիների կողմից — մի բռնագրաւում, որ միջազգային դաշնագրերի ազդակող ոտնահարումն է ներկայացնում: Ո՛չ Ազգերի Դաշնակցութեան Որհնորի միջամտութիւնը, ո՛չ Միացեալ Նահանգների ազդարարութիւնները, չարկելիցին ճապոնական կառավարութիւնը՝ ընդարձակել իր այօրէն բռնագրաւումը, պատերազմական գործողութիւններ կատարել և ամէն միջոց գործ զննլ (Մանչուրիայում) իբր թէ՛ ապառ մի պետութիւն ստեղծելու, որ ոչ այլ ինչ է լինելու, քայն եթէ ճապոնական տիրապետութեանը ծառայող մի գործիք: Եւ այս բոլորի հեղինակ է մի կառավարութիւն, որ անդամ է Ազգերի Դաշնակցութեան, մինչև իսկ Արգերի Դաշնակցութեան Որհնորին և որ ստորագրել է Փարիզի Դաշինքը (Կելլոգի Դաշինք), ինչպէս նաև Ուաշինգտոնի համաձայնագրերը:

Ը. Ա. Ինտերնախոնայի Բիւրօն ազդարարում է յայտատարութեանը այն վտանգը, որ աշխարհի խաղաղութեան համար ստեղծուած է այս ոտնահարութիւններով՝ մի ժողովրդի ապառ ինքնորոշման իրաւունքի դէմ՝ միջազգային դաշնագրերի այս ամօթալի ոտնահարումով և վարկերկրումով այն հաստատութիւնների, որոնք նպատակ ունին միջազգային ընդհարումները խաղաղօրէն լուծելու:

Բիւրօն յայտարարում է որ մինչև ճապոնական կառավարութիւնը չպարպէ Մանչուրիան, նրա ներկայացուցիչները մասնակցութիւնը Զինաթափութեան Որհնագոյնովին պիտի համարել հեղանք և մարտահրաւեր:

Բիւրօն վկայում է Զինատանի աշխատաւորութեանը որ ընկերվարական բոլոր աշխատաւորների համակրանքը նրա կողմն է: Նա յուսով է, որ երկու երկրների աշխատաւորութիւնը ընդհանուր ճակատով հանդէս կը դալ աշխարհակալական մի քաղաքականութեան դէմ, որ երկուսի համար էլ վնասակար է: Բիւրօն զարմատաբեցնում է Ը. Ա. Ինտերնախոնային յարած բոլոր կուսակցութիւնների աշխատաւորներին՝ ամէն առիթօք օգտարործել խաբանելու համար ճապոնական աշխարհակալութիւնը, որ ուղղուած է ժողովուրդների իրաւունքի դէմ»:

« ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԵՔԵՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ » ԳԻՄՈՒՄԸ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՒԱԿԻՆ — Զ. Մ. Բ. Միութիւնը մի գրութեամբ՝ ուղղած ընկ. է. Վանդեբվելդին՝ Ինտերնասիոնալի ուշադրութիւնն է հրաւիրում Մանջուրիայի դէպքերի վրա: Միութիւնը, խարանելով մի կողմից բոլշեկիներին, իսկ միւս կողմից ճապոնացիներին սխրագործութիւնները Զինատանում և յիշատակելով այն դիմումները, որ կատարւած են Արգենթինայի նախկին իշխանութեանը և Կելլոզի Դաշինքը ստորագրած պետութիւններին՝ ճապոնական աշխարհակալութիւնը սանձահարելու համար՝ դրում է ի միջի այլոց՝ «Աշխարհի մէջ մի նեցուկ եւս կայ, որ մենք, առանց սխալանքի մէջ ընկնիլու, չէինք կարող անտես անել: Սա Երկրորդ Ինտերնասիոնալն է:

Մենք խնդրում ենք նրան թխանակելու ազգել Արգենթինայի նախկին իշխանութեան վրա, որպէսզի վերջինս գործադրի Արգենթինայի նախկին իշխանութեան դաշինքի ԺՋԻՔ յօդւածը, ըստ որի դաշինքն ստորագրողները պարտաւոր են անյապաղ դադարեցնել անտեսական յարաբերութիւնները անարար յարձակողի (ներկայ դէպքում Ճապոնիայի) դէմ և ենթարկել նրան այն ծանր պատիժներին, որոնք պահանջում են ստորագրւած դաշնագրերի այսօրինակ սոսնձարումի համար»:

« ՍՊԱՆԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ » ԲՈՂՈՒՐԸ — Ս. Ա. Միութիւնը, ընկերվարական կուսակցութեան համատեղութեամբ մի բողոք է հրատարակել այն միջամտութիւնների դէմ, որ կատարում են վարչական օրգանները յօդուած գործատէրերի, երբ աշխատուորութիւնն ընդհարում է վերջիններին հետ: «Մեր երկրի աշխատուոր դասակարգը մասնակցել է յեղափոխութեանը և չի կարող ճանդութել, որ իր առատաբան զոհաբերութիւնները վարձատրեն այլերախտութեամբ»:

Բողոքադրի անմիջական ատիթն է հանդիսանում Արնէշտում տեղի ունեցած ընդհարումը, որի միջոցին չորս աշխատուորներ սպանեցան և անլիք քան երեսուն հողի վրատուրեցան:

Որհնդարանի ընկերվարական հատումը հանգանակութիւն է բացել զոհերի համար, որին մասնակցել են ոչ միայն խորհրդարանի ընկերվարական պատգամ

մաւորները, այլ և կառավարական կազմի մէջ գտնուող երեք ընկերվարական նախարարները:

ԲԱՐԱԶԻԼԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՆԸ ԵՒ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՒԱԿԱՆ — Բրազիլիայի Աշխատուորական կուսակցութեան վերջին համագումարը որոշում է հանել ինտերուոն որ Ը. Ա. Ինտերնասիոնալը ընդունէ նրան իր մէջ:

Համագումարին մասնակցում էին 89 աշխատուորական կազմակերպութիւններ, շուրջ 23.000 անդամներով:

Արգենտինայի և Ուրուգուայի յետոյ, Բրազիլիան երրորդ երկիրն է Հարաւային Ամերիկայից, որ յարում է Ը. Ա. Ինտերնասիոնալին:

ԵՐԱՅԻ ԿՈՐՈՒՍ — Անգլիայի Աշխատուորական կուսակցութիւնը անցեալ ամսին երկու ծանր կորուստ ունեցաւ:

Յունւար 8ին վախճանեց Վիլիեմ կրահամ, որ կուսակցութեան Ֆինանսական մասնագէտն էր խորհրդարանում և առաջին թեկնածուն էր համարւում Ֆինանսական նախարարութեան համար: Աշխատուորական առաջին կառավարութեան ժամանակ, Կրահամը պետական գանձառան Ֆինանսական խորհրդատուի պաշտօն էր կատարում, իսկ երկրորդ կառավարութեան օրօք առևտրական նախարարութիւնն էր վարում: Ժողովրդական համեստ խաչից ելած և ինքնաշխատութեամբ համալսարանական կրթութիւն ստացած՝ Կրահամը, որ հաջիւ 44 տարեկանում այնքան ազդեցիկ դիրքի էր հասել կուսակցութեան մէջ, որ մահով խնդրող թաց առաջացրեց անգլիական աշխատուորութեան կեանքում:

Յունւարի վերջերին իր մահկանացուն կնքեց Դր. Մարիան Ֆիլիպպը, որ Անգլիայի Ընկերվարական Կուսակցութեան Միութեան հոգին էր և ազդեցիկ դէմքերից մէկը — եթէ ոչ ամենաազդեցիկը Ընկերվարական Կուսակցութեան Ինտերնասիոնալի մէջ: Ինտերնասիոնալի բոլոր համագումարներին նա ներկայ էր, միշտ վարչապետ և միշտ ուշադիր դէպի քննութեան դիմած կարգերը, որքան էլ նրանք մանր երևային:

Դր. Ֆիլիպպի մահուն գոյտը հասնում է Ինտերնասիոնալին Բիւրօի վերջին նիստի ժամանակ՝ խորը տրեւութեամբ համակելով ամենքը:

ՃՇՏՈՒՄՆԵՐ.

«Երոզակ»ի հոկտեմբեր համարում, Մածուն Սէչօի կենսագրական յօդածումը կան պատմական և ժամանակագրական սխալներ, որ հարկ եմ համարում ճշտել: Այսպէս, ճիշտ չէ, որ Սէչօն Շուշուց է անցել Պարոկաստան: Իրականը հետեւեալն է. —

Մածուն Սէչօն (Գրիգոր Միրզաբէգեան), Արամայիւր (Միսակ Տէր-Դանիելեան), Պիժի Աշուր (Արշակ Տէր-Յովհաննիսեան) և ես, 1896թ. յունւարի վերջին թողնել Բալթիանին, ուր ծառայում էինք, և անցանք Բապու: Այստեղ, հանգուցեալ Ներսէս Դաւթեանի ջանքերով յաղդեց պարսկական անցադիր ստանալ, և Ն. Դաւթեանի յանձնարարականով անցանք Թիֆլիս, ապա՝ Երեւան, ուր մնաց Պիժի Աշուրը, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհը և մարտ 12ին հասանք Թաւրիզ: Թաւրիզից Մածուն Սէչօն ճանապարհեց Սալմաստ փոխադրական գործով դարուելու համար և մինչև արշաւանք էլ աշխատեց Սալմաստ, Սէյդաւար, Նախապկայ, Աստապատ, Խանուխար, Երեւան գծի

վրա: (Տէ'ս նաև Արամայիսի «Գաղափարի ճանապարհ» հին»):

Կենսագրականում ասւած է, թէ՛ «այդ ժամանակները (1894թ.) Շուշում սկսել էր կազմակերպւել Հ. Յ. Դ., պատրաստում էր Սեւ Բարեցի Սաքօի, Վարդանի ու Դուռմանի ղեկավարութեամբ 25 հոգիներ մի խումբ երկիր անցնելու նպատակով»: Սաքօն և Դուռմանը այդ ժամանակները Դերիկուս էին, իսկ Վարդանը՝ Սալմաստում: Ուրեմն, Շուշում լինել չէին կարող (Տէ'ս Վարդանի «Երոզակ» 1912թ. և Սաքօի յուշերը):

Կենսագրականում ասւած է. «Քաղաքից էլէրով գէնք էին փոխադրում այգիները, որտեղից ձիերով բերում էին Սալմաստ»: Երեւանի այգիներից մինչև Սալմաստ գէնքը փոխադրում էր Փուրզոններով. մենք ունէինք կազմակերպւած Փուրզոնիներ, որոնց մէջ զեռ 1893 թ.ից յայտնի էր Դուշար օլլի հայ Փուրզոնիւն, որը Թիֆլիսից փոխադրել էր Կարօի գնած գէնքերը Կարօի և իմ մասնակցութեամբ: Կար և մի երկրորդ

դը, աւելի գնահատելին, որի անունը, դժբախտաբար, մտքիցս վրիպել է: Երևան քաղաքից էլ զհնէբերը, սովորաբար փոխադրուած էին ոչ թէ արգիներով, այլ ֆուրգոնով տարուած էին Ռանուխլար գիւղը, Ստեփան մարի մօտ, կամ Նախիջևան, ուր աշխատուած էին Սաբօն կամ ոտտիկան Ստեփանը: Ճիշտ է, Ռէչօն էշ ունեցել է, բայց դործ էր անուած, առհասարակ, սուրհանդակային աշխատանքների համար և երբեմն միայն փալանի մէջ փամփուշտ էր փոխադրուած:

Կենսադրականուած ասուած է, թէ Ռէչօն 1897 թ. մասնակցեց Նանասորի արշաւանքին: Գժբախտաբար, նա բախտ ունեցաւ մասնակցելու: Նախ քան արշաւանքը նա ստացած հրահանգի համաձայն կազմակերպեց մի խուզարկու խումբ և յաջողութեամբ բարձրանալով Արաուլ լեռան գագաթը՝ դիտակով ուսումնասիրեց Ռանասորի դաշտն ու Շարաֆ բէգի վրանների դասաւորութիւնը, կազմեց յատակագիր և յաջողութեամբ վերադարձաւ՝ արժանանալով ընկերների բուռն զօհունակութեան: Սակայն, արշաւանքից երկու օր առաջ ձի քշելու վայր ընկաւ և տեղից խախտեց ոտի թաթը, որի պատճառով չկարողացաւ մասնակցել արշաւանքին: Նա չափազանց զգացած, արտասուլից աչքերով ճանապարհ գրեց ընկերներին. «Բա՛, էսպէս էլ բախտ կը լինե՞, ասում էր նա, այսքան աշխատեմ փոխադրութեան վրա, զնամ յաջող լրտեսեմ թշնամուն և կուրին շմանակցե՛մ...» Իրօք որ ծանր էր այդ Ռէչօի նման ներկած յեղափոխականի համար:

Սիսալ է ներկայացած Եփրեմի ունեցած զէպքը Թաւրիղի գերեցմանտանը: Ինչպէս ասացինք, 1896թ. մարտին Ռէչօն եկաւ Թաւրիղ: Մինչ այդ նա Բայախանում էր և Ղարազող լինել չէր կարող: Եփրեմը Սիբիրից Թաւրիղ եկաւ 1896թ. հոկտ. 19ին և նոյնպէս Ղարազող լինել չէր կարող, քանի որ կտրուած էր Սիբիրի երկար ճանապարհը: Նոյեմբերի վերջերին, կիրակի օր, նոր մտադած ձիւնից տրամադրուած՝ Եփրեմը Մարգարէի հետ զնում է որսի: Հետապնդելով մի նապաստակի՝ մտնում են քաղաքի մօտի այգիներից մէկը: Այդու տէրը մի մեծ փայտ ձեռքին, հայհոյանքով մօտենում է նրանց: Եփրեմը հանում է արծանահիւր: Մարգարը գզուչացնում է խուսափել ընդհարումից, սակայն, Եփրեմը պատասխանում է. «Ի՛նչ գնա՛, ես պաշտպանելով կը գամ»: Մարգարը հետանում է կարծելով, որ Եփրեմը հետևում է իրեն, բայց սա յամառում է և կանգնած՝ գզուչացնում է թուրքին չմօտենալ: Թուրքը փայտը ձեռքին յարձակուում է Եփրեմի վրա. սա կրակում է արծանահիւր և վերատրուած թուրքի ոտքի թաթը: Թուրքը վայր է ընկնում և սկսում է օգնութիւն կանչել: Եփրեմը խոյս է տալիս և թաղանթում է մի ծանօթի մօտ: Դէպքը անախորժ էր. Թորոսը (Ալոյեան) կարգադրեց, որ Մարգարը էլ արհեստանոց չգալ ու թաղանթ: Սակայն, Մարգարը կարևորութիւն չի տալիս և առաւօտեան փողոց դուրս գալով ձերբակալուած է դալարէզի (Թաղապետի) Փարաշներից: Մի քանի օր յետոյ միայն, ծանօթ Տիկին Նաբգիլ Ռանուսի մէջնադուրթեամբ հնարատր եղաւ. 53 թուման տուգանք վճարելով Մարգարին ազատել

բանտից: Ահա զէպքի իրական պատմութիւնը: Եփրեմը Ղարազող ապաստանից միայն Ռանասորի արշաւանքից յետոյ:

Մի քանի խօսք էլ Մածուն մականունի մասին: Ռէչօն առհասարակ մածնակեր էր, բայց շատ անգամ պայմաններն էլ հարկադրուած էին մածուն ուտել: Ծանապարհին, այս կամ այն դիւրում, երկար կանգ չառնելու համար, նա մածուն էր պահանջուում, ուստեւ և անմիջապէս շարունակում էր ճանապարհը: Ծաշի կամ ընթրիքի չէր սպասում, և դիւղացիները նրան ճանաչուած կամ ծանօթացնում էին ասելով՝ «Է՛ն մածուն ուտողը»: Այս բացատրութիւնը նրան տարբերում էր մեր միւս Ռէչօներից՝ Մարազ Ռէչօ կամ Բիճայի Ռէչօ, Վալազ Ռէչօ և այլն: «Մածուն ուտող Ռէչօն» հետադային դարձաւ Մածուն Ռէչօ: Այս անունը նա ըստացաւ Ռոյի Մէլչաւար գիւղում:

Չարվաղար անունն էլ Ռէչօն պատակել է այնպէս, ինչպէս շարվաղար Ակորը (Տէր-Շարիշէ): Տէն Մալխօսի «Ակորումները» և իմ «Բանաստորութիւն և փախուստ» յուշերը «Յուսարբքի» 1931թ. ապր. 21 համարում: Նա երկար շարվաղարութիւն է արել կամակերպական ձիրքով գէնէ և ընկերների փոխադրելով:

Մածուն Ռէչօն պատակուած է մեր այն ընկերների շարքին, որոնց կենքը հարուստ է յեղափոխական արկածներով և խելացի ու յանդուգն զործերով: Նա վերին աստիճանի ճարպիկ, ճկուն ու խելօք յեղափոխական էր, այնպէս կարողանում էր ծպտուել, այնպէս մտորեցնել թշնամուն: Օրինակ, Էրեւ շարաւար, իւրեւ աղքատ իշապան նա այնպէս բնական էր, այնպէս էր իւրացրել նրանց բոլոր շարժումները, խօսքը, վարելակերպը, որ դրսի մարդը հազիւ թէ կարողանար կասկածել, թէ չարվաղարի համեստ հաշուատի տակ ծածկուած է յեղափոխականի կրակոտ հոգին:

Երկու խօսք էլ Զիմագործ Մարգարի մասին: Նրա խակական անունը Թաղանթ է, իսկ կեցծ անունը՝ Մարգար: Գոնէ ինքը ինձ այդպէս է ասել: Առհասարակ, զբոխց եկած խակասաւոր-գինեգործները խակական անունով յայտնի չէին դուրսը: Ամենքն էլ կեղծ անուն էին զործածում: Թաւրիղ է անցել ոչ թէ ձի խումբ ընկերների հետ», այլ Թորոսի և Պետրոսի հետ 1895թ. գեկտեմբերին, յատկապէս արհեստանոցում աշխատելու համար: Երբեք գէնքի փոխադրութեամբ չի դրաղել և, ուրեմն, գէնք փոխադրելիս չի ձերբակալուել: Ռանասորի արշաւանքից յետոյ այլևս արհեստանոցում չի աշխատել:

ՍԱՄՍՈՆ

Մամ. խնք.— Սիրով տեղ տալով ընկեր Սամսոնի գրի առած ճշտումներին՝ հարկ ենք համարում ուրիշ ընկերների չլ խնդրել, որ նկատած պատմական և փաստական սխալները իմացնեն մեզ: Անցեալի մեր պատմութեան վերաբերեալ տեղեկութիւններէ, յուշերի կամ կենսադրականների մէջ վերկուրմանն անխուսափելի են, քանի որ քննուած ու ստուգուած պատմութիւն ու ժամանակագրութիւն չունի դեռ հայ յեղափոխական շարժումը. նման ճշտումները օգտակար ծառայութիւն կը մատուցանեն մեր ապագայ պատմագրութեան:

Գրախօսական

Մ. Վարանդեան, ՄՈՒՐԱՍ (Մերաստացի Ռազմիկի կեանքն ու գործը)։ Հրատ. Մուրատ Տոնդազի Կեդր. Վարչութեան, 1931, Պոսթըն։

1919 թվականից է վեր Ամերիկայում գոյութիւն ունի «Մուրատ Տոնտ» անունով մի միութիւն, որի նպատակն է Վերաստացի անձանց Մուրատի անունով և յիշատակին արհեստանոց մը և բազմաբնակարան բարձրագոյն վարժարան մը հիմնել: Այդ միութեան նախաձեռնութեամբ և նիւթական միջոցներով զբաղւած ու հրատարակւած է գրախօսականի ատարկայ կազմող հատորը: Մի ըստ ամենայնի բաջլայերանքի արժանի ձեռնարկութիւն: Երանի՜ թէ մեր ուրիշ ակնասուր նահատակները կենսագրականներն էլ հրատարակէին նոյն ձևով:

Ընկ. Վարանդեանի գիրքը բաղկացած է 348 էջից — ընտիր թուղթ, ինձամաճ տպագրութիւն, պատկերազարդ — և ընդգրկում է Մուրատի «կեանքն ու գործը» ծնունդից սկսած մինչև մահ: Մուրատ Տոնտի Կեդր. Վարչութիւնը ջանք ու զբաժ չի խնայել իր հերոս հայրենակցի յիշատակը լաւագոյն ձևով յաւերժացնելու համար:

Մեր ներկայ պայմաններում գիրքին բան չէ նման գործ գրութի ընդերք, և ընկ. Վարանդեան, ի հարկէ, լուրջ դժգոհութիւններ է հանդիպել գիրքը գրելիս: Այդ դժգոհութիւնները նա մասամբ միայն կարողացել է յաղթահարել:

Սկսեմք, թէկուզ, աղբիւրներից: Ընկ. Վարանդեանը օգտուել է գլխաւորապէս տպւած կամ անտիպ յուշերից ու ցուցմունքներից, իսկ այնպիսի մի հարուստ ու թանկարժէք շանձարան, որպիսին է Հ.Յ. Գաշնակցութեան զիւանը, մնացել է չօգտագործւած: Իր ձեռքն ընկած յուշերն ու ցուցմունքներն էլ, առհասարակ, քննական բովից չի անցրել, կապւել է իրար հետ, մեծ մասամբ, մեքենայական ձևով, արժէքաւորն ու անարժէքը, ստորին ու կասկածելին կողք-կողքի: Հրատարակւած նիւթերն էլ լրիւ կերպով չեն օգտագործւած: Այն և ուրիշ պատճառներով, Մուրատի կեանքն ու գործունէութեան շատ կողմեր թերի են լուսաբանւած, կամ նոյն իսկ քնաւ նկատողութեան առձեռն չեն: Շատ դէպքեր ու գործեր սկսանազբաւած են անորոշ, թուուցիկ կամ միակողմանի կերպով. երբեմն էլ՝ հակասական:

Հէնց սկզբից. 1890ին 16-17 տարեկան Կոմսունցի պատանին ընկնում է Պոլսու և ըստ ընկ. Վարանդեանի գառնում է համալ, մինչդեռ քիչ անդին, ընկ.Մ.Սեւորոպը վկայում է, թէ՛ «Շէրշիի անդնուրի գործարան «Պոստիթի» դիշերապակ էր»: Պոլսում Մուրատը մնում է 2-3 տարի և 18-19 տարեկան հասակում, ըստ Տ. Մեքրոպ քահանայի վկայութեան, շարժել է Բորսալուրական դէպք մը դարձած էր»: Ինչպէ՛ս է դարձել Բորսալուրական դէպք — յայտնի չէ և, առհասարակ, Մուրատի Պոլսի կեանքի ու գործունէութեան մասին շատ քիչ բան ենք իմանում: Յայտնի է միայն, որ նա մրտնուած է Հնչակեան կուսակցութեան շարքերը: Ընկ. Վարանդեանը ակելացնում է նաև, թէ՛ «Մտոյդ է, որ Մուրատ Պոլսյ մէջ տէրտրական գործողութիւններ ալ կատարել է», բայց չի իմացում, թէ՛ երբ է կատարել, որի՞ դրոշմով, ո՞րմ վերաբերմամբ, ի՞նչ յանցանքի համար և ի՞նչ հետեւանքներով:

Գաղտնիքը չին լուծում և ընկ. Լեւոն Մեքրոպի ու Տ. Մեքրոպ քահանայի ընդարձակ ցուցմունքները, որոնց և ընկ. Վարանդեանի յայտնածների միջև կան զգալի տարբերութիւններ: Այսպէս, ըստ Մ. Վարանդե-

անի՝ Մուրատը հետապնդելով մի վաշտ դիւորներէից և ոտտիկաններից իրբև աշակերտէ՛լ, ապաստանում է Ղալաթիոյ եկեղեցին, ուր ատրճանակով ծանր վերաւորում և արհեստաբան գետնի է գլորում մի ոտտիկան. մի շէշեր յետոյ, «Պատրիարք Իրմիլիանի խնդրանօք զեսպանները կը միջամտեն, Մուրատ անոնց երաշխաւորութեամբ նաև կը նստ—դէպի Երիպոստ»: Մինչդեռ ըստ Լ. Մեքրոպի Մուրատ «ձօտ ամիս մը, թերևս ամէկի մնաց Ղալաթիոյ եկեղեցին»: Վարանդեանի և Լ. Մեքրոպի դրածոյց երևում է, թէ՛ Մուրատը միտակ էր Ղալաթիոյ եկեղեցում, մինչդեռ Մեքրոպը քահ. վկայում է, որ նա մէկն էր եկեղեցին ապաստանած 450 հնչակեաններից: Այդ բազմութիւնը, ըստ Մեքրոպ քահանայի, եկեղեցում ապրեց շարժիներով, նոյն իսկ իրեն համար գտնօրէն իտրուրով մը՝ ընտրեց Մուրատի նախագահութեան խորհուրդ: Շարաթներ յետոյ, մեծ մասը դուրս եկաւ և մնաց Մուրատը 72 ընկերներով: Ըստ ընկ. Վարանդեանի Մուրատը Պոլսից մեկնեց «դէպի Երիպոստ», և յետոյ միայն Յունաստան, մինչդեռ ըստ Լ. Մեքրոպի՝ նա գնում է Աթէնք, ուր նոյն իսկ «հնչակեան հակալքուական միութիւն» էլ է կազմում:

Այստեղից Մուրատն անցնում է Թիֆլիս, ուր ծառայութեան է մտնում Էնֆիլանտների ծխախոտի գործարանը օրական 60 կողէկով: Ինչքա՞ն է մնում Թիֆլիսում, ի՞նչ գործեր է կատարում, յայտնի չէ: Թիֆլիսի կեանքից միայն մի դէպք է պատմւում՝ յաղթական գոտեմարտը վրացի Ռիսխի հետ, որի հետևանքով Էնֆիլանտները ենապակուցում է նրա առձեռն: «Սակայն, այդ բոլոր յարողութիւնները շատ չէին հետաքրքրեր ու չէին յուզեր Մուրատը — գրում է ընկ. Վարանդեանը — Օր մը, յանկարծ, կը ձգէ Թիֆլիսը և կը քննէ Լոռիի ճամբան»: Ատղով, 7 օրից, հասնում է Կարս, յարում Հ.Յ. Գաշնակցութեան և մի առ ժամանակ գրադւում է զէնքի փորձարութեան և կայմակերպական գործերով: Ազգում է երկիր անցնել, բայց Կարսի կամ միտն չի արտօնում: «Մուրատ Կարսյ շրջանին մէջ անհրաժեշտ ոյժ մըն էր՝ ոչ միայն պատասազական պրոպագանդ մղելու և խմբեր կազմակերպելու, այլ և լրտեսներ ու դաւաճաններ կոտորելու համար»:

Պէտք է տեսլ, որ շատ հետաքրքրական են Մուրատի կեանքի Կարսի տարիները, որոնք, չօրհախարարը, դրճում խիտ հարևանցի կերպով են շօշախմած: Չեն օգտագործւած նոյն իսկ Կոմսի յուշերը «Հայտնիք»ում և Այնուհետև ընկ. Վարանդեանը գրում է, որ Մուրատը Թիֆլիսում գրունտ մասնակցութիւն կը բերէ՝ «Փոթորիկ»ի դարձին. «Բիրեստափորի հրահանգով և «Փոթորիկ»ի ազդարարները գրպանին մէջ կը ներկայանայ Թիֆլիսի հայ կուսակցութեան, որոնցմէ մէկ քահանայի քարացած սիրտերը կը գրաւէ իր անոյշ լեզուով ու կտունէ խոշոր գումարներ»: Այն ինչ, որքան յայտնի է, նա քաջ չի ունեցեց՝ «Փոթորիկ»ի հետ: Ը Վարանդեանի շփոթում է Միւրանի հետ: Ըստ ընդունւած սովորութեան, «ազդարարապիք» ստանդը ոչ միայն ամեն լեզուով չէր կարող բանիցնել, այլ եւ քնաւ իրաւունք չունէր բանակցելու. նա պէտք է յանձնէր թուղթը եւ հետանար»:

1903թ. մայիսին, Թորոզի խմբի հետ, իրբև պարզ

*) Տե՛ս Ռ. Սեւանի. «Թաւազիկ Յուշեր Բրիտաւարի կեանքից», «Գրօշակ», 1929թ., նոյնմիւր, № 11:

ձշատմի պէտք ունին և ընկ. Վարանդեանի հետեւ-
եւալ տողերը.

«Հասան Կարս, ուր շուտով հասաւ և Հայաստանի
պատերազմական նախարարը, Մամիկոնեան, շարք մը
ուրիշ նախարարներու հետ: Սեպուհ և Մուրատ լաւ
ընդունելութիւն չգտան հոր: Ինչք պատեր. նախարար-
ըր յանդիմանց գանոնք, ըսելով, որ իբր թէ երկու
նշանաւոր խմբապետներ եղբր էին անկարգապահ,
զորո՞նք էին ինչքանաչափ և իրենց կուլու ձեւերով վը-
նասեր էին նոյն իսկ Հայիկական դատին»:

Նայի՛ այդ ժամանակ, 1917թ. մարտին, Հայաս-
տանի կառավարութիւն ու Հայաստանի նախարարներ
չկային դեռ. Սոս. Մամիկոնեանը Ազգ. Խորհրդի ան-
դամ էր Թիֆլիսում*): Յետոյ, եթէ Մամիկոնեանը,
իրօք, այդպիսի խօսք արել էլ է, խնդիրը, անտարա-
կոյս, վերաբերել է այն սուր տարակարծութիւննե-
րին, որոնք առաջ եկան Մուրատի ու Սեպուհի և Մա-
րդարիչի ճակատի հրամանատար զօր. Արէշեանի մի-
ջև: Այլ խնդիր է, թէ որ կողմն էր արդար կամ մեղա-
ւոր, բայց այդ տարակարծութիւնները խիստ ծանր
անդրադարձում ունեցան ուսմանակաւոր զործողու-
թիւններէ վրա:

Թերի էն լուսարանած և Մուրատի կեանքի հե-

* Այսպիսի ուրիշ սխալներ էլ պատահում են զբոսում: Օրի-
նակ, ընկ. Վարանդեանը զբոս է, թէ՛ «ազգամակաւոր պաշտ-
պանելու համար». Ազգային Բիւրօն կորուցէր բացի ուրոյն հայ-
կական զօրպիւսէ — զօր. Նազարբէգեանի հրամանատարութեան
տակ — կազմակերպել նաեւ զիվիզիտ մը, որու հրամանատարու-
թիւնը կը յանձնէր Անդրանիկին»: Այդ ժամանակ այլեւս Ազգ-
Բիւրօն ղյուլութիւն չունէր. զօրծու՞մ էր Ազգ. Խորհուրդը, որ տար-
բեր մարմին էր: Գիւրդիս կազմելու որոշումը տակ է Ազատ-
վութեան Խորհուրդը եւ ոչ Ազգ. Խորհուրդը: Յետոյ, ընկ. Վա-
րանդեանը զբոս է, որ Վեհնայի Ընդհ. Ժողովից յետոյ, զայս-
պէս կոչւած անխտականներն ալ, բացառութեամբ հանդուցեալ
Լեւոն Աթաբէգեանի եւ իր քանի մը ընկերներու, վերագարձան
Մարդուսակցութեան զիվիզ: Անխտականները Հ.Յ. Դաշնակ-
ցութիւնից չէին նետացել և, ուրեմն, չէին կարող վերադառնալ
Երանք միայն առանձին յայտարարով ընդունեցին Ընդհ. Ժողովի
որոշումները: Ընկ. Վասանդեան մի քանի տեղ ստու՞մ է, թէ զօր.
Անդրանիկ հրամանատար էր զկամաւորական բանակի», զկամա-
ւորական վաշտերու», այն ինչ նա հրամանատար էր «Արեւմտա-
հայ զիվիզիայի, որ կանոնաւոր զօրամաս էր եւ որի մէջ կային
կամաւորական մասեր էլ, ինչպէս եւ զօր. Սիլիկեանի եւ Արէշ-
եանի զօրամասերի մէջ:— Ընկ. Վարանդեանը զբոս է ճեպարան
ընկաւ միայն 1918թ. սեպտ. 17ին՝ պէտք է լինի՝ 15ին: Եւ այլն:

տալայ դէպքերը. դեղերումները Թիֆլիսում, Հիւս-
կովկաս և Բազու անցնելը, Մուրատի և Ազգ. ու Ապա-
հովութեան, ինչպէս և Բազուի Արդային Խորհուրդնե-
րի փոխարարներութիւնները: Չափադանցութիւն է ա-
սել, թէ Բազուի շուրջ մղւած օրհասական կռիւների
«խոշոր դերակատարներէն մին եղաւ Սերաստացի Կըտ-
րիճը»: Մուրատ լոկ մի քանի օր մնաց Բազուում և
մասնակցեց, այն էլ պատահաբար, միայն մէկ ճակա-
տամարտի, ուր և ընկաւ թշնամու զնդակից: Մահու
թւականը չի բերւած զբոսով. Մուրատն սպանեց
օշոստոս 4ին:

Ընկ. Վարանդեան թւումար խօսքերով է սղում Մեծ
Հայրուկի կորուստը.

— «Կասպեան ալիքները, լեբի ափերուն դարնե-
լով, շատաձայն երգեցին Հերոսի մահը — և բերնե-
րեան, շարքէ-շարք, թաղէ-թաղ, կայնակի արագու-
թեամբ տարածեցաւ աղէտաւոր բօթը — «Մուրատը
գարիցցին», «Մուրատը սպանեցաւ»...

«... Ընկաւ Մուրատը երկարատեւ, ահաւոր Գող-
գոթայ մը պարելէ յետոյ, դեռ վրէժի մրմունջը շուր-
թերուն, դեռ չտեսած Հայրենիքի ազատութիւնը —
Հայիկական Անկախութեան Արեւը — որու զօրղոյնն
ճառագայթները կը շողողային Մասիսի գագաթնե-
րուն»...»

* * *

Այս մի քանի դիտողութիւնները՝ զբքի բովանդա-
կութեան փաստական կողմէ մասին: Գրութեան տեսա-
կէտից, ընկ. Վարանդեանի ներկայ հատորի մասին էլ
կարելի է ասել՝ «նոյնը՝ ինչ որ նրա միւս աշխատու-
թիւններէ — բարձր ու թեւաւոր ոճ, յուշական ճար-
տասանութիւն, մերթ շեղ ու մերթ անփոյթ էջեր,
միշտ լարւած ու խանդավառ: Նա աւելի խօսում է Մու-
րատի առթիւ, քան Մուրատի մասին, այդ պատճառով
էլ յաճախ շեղումներ է կատարում, մէջ է քաշում Հիմ-
նական նիւթի հետ ստընչութիւն շունեցող խնդիրներ,
կտրում է պատմութեան թելը, ստիպւած է լինում
կրկնութիւններ անել և այլն:

Այսուհանդերձ, դիրքը կարգապէս է դերու-
թեամբ ու տեղ-տեղ նոյն իսկ լարւած հետաքրքրու-
թեամբ: Եթէ փաստական նիւթ փնտրողները նրա մէջ
չառ բան չգտնեն էլ, ընթիցողներէ լայն շարքերը և,
մանաւանդ, պատասխները կը կարգան ու կը ներշնչեն
Սերաստացի Մեծ Յեղափոխականի դադախարական
կեանքով ու գործերով:

Ս. ՎՐ.



« Դ Ր Օ Շ Ա Կ » - ի ն ո թ ր ն ա ս ց է լ ը

ԱՅՍՈՒՀՆԵՏԵՒ « Դ Ր Օ Շ Ա Կ » - ԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿ, ԳՐՈՒԹԻՒՆ, ԳԻՐՔ, ԹԵՐԹ,
ԴՐԱՍ ԵՒ ԱՄՆԵ ԿԱՐԳԻ ԱՌԱՔՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼ ՀԵՏԵՒԵԼ ՀԱՍՅԵՈՎ.

Rédaction „DROSCHAK“ 71, ave. Kléber
PARIS (XVI) France



ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

« Դրօշակ » ը լռյա կը տեսնէ իւրաքանչիւր ամսի առաջին շաբաթ օր: Նոյն օրը փտտիմն կը յանձնէ Տրամսայի բաժանորդներու և փոխանակութեան համարները: Միւս երկիրներու բաժանորդներուն կը զրկի յաղորդ շաբթու ընթացքին: Միջոցներ ձեռք առնած են «Դրօշակ»ի կանոնաւոր առաջունը ապահովելու համար: Չստացելու կամ անկանոն ստացման պարագային կը խնդրէ իմացնել Վարչութեանս:

«Դրօշակ»ի Վարչութիւնը կը խնդրէ բաժանորդներէն և գործակալներէն օր առօր մաքրել իրենց հաշիւները:

ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

Դոկտ. Բ. Միմասեան, «Մանկավարժութեան Հիմունքները», 1931թ. Քարիկ:

Մ. Վարանդեան, Մուրատ, Հրատ. Մուրատ Փոփոկ Կեզք. Վարչութեան, 1931, Պոսթըն:

Ա. Երամեան, «Պարսկահայ Աշուղները», Հրատ. «Վերածնունդ»ի, 1930, Թեհրան:

Եղ. Հայպետ, Շիրիի Սիրտը, գերբնական գրոյց, Հրատ. «Վերածնունդ»ի, 1930, Թեհրան:

Հ. Յ. Գ. ԿԵԳՐ. ՄԱՏՆԵԱԳՐԱՆԻ ԿՈՂՄԷ

Հ.Յ.Գ. Կեգրոնական Մատնեագրանը կը խնդրէ հայ հեղինակներէն և հրատարակչիներէն՝ իրեն զրկել մէկական օրինակ իրենց երկերէն ու հեղինակութիւններէն, ի հարկին, փոխանակութեան պայմանով:

Հ.Յ.Գ. մարմինները և ընկերները պարտաւոր են իրենց բոլոր հրատարակութիւններէն (քերթ, գիրք, թուղիկ և այլն) մէկական օրինակ զրկել Հ. Յ. Գ. Կեգր. Մատնեագրանին:



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

« Դրօշակ » - ի տարեկան բաժնեդիւնն է՝

Տրամսայի, Յունաստանի, Բուլղարիայի, Ռուսնիայի, Երոպական այլ երկիրների, Սուրիայի և Պարսկաստանի համար 25 ֆրանկ:

Անգլիայի, Ամերիկայի, Եգիպտոսի, Միջագետքի, Հնդկաստանի եւ մնացած բոլոր երկրների համար՝ երկու դոլար:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Թիւրք մամուլի արշաւանքը (Մժբարական) 25	Զանգեզուրի լեռներում (Գուրգէն) 39
Նշանակալից տասնամեակ (Աշուն-Արժուներ) 26	Լորէնս, Դէտերդից և Դաշնակները 40
Օտար դրամագլուխը Թիւրքիայում (Վ.) 28	Վասպուրականի վիճակը 41
Բագուի քրիստոսական հանդէսը (Ն.Բաղդադեան) 31	Ինտերնասիոնալ 42
Ը. Ա. Ինտերնասիոնալը 1931ին (Ա. Զամալեան) 32	Մի ճշտում 43
Կարմիր գծից ներս 35	Գրախօսական 45



« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանտ.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

Rédaction « DROSCHAK »
71, ave. Kléber. PARIS (16°)